

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«07» հունվարի 2004թ.

թիվ 2/Ղ

Ռեզիդենտների կողմից շահութահարկի հաշվարկման և վճարման հրահանգը հաստատելու մասին

Հիմք ընդունելով «Շահութահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 69-րդ հոդվածը և նպատակ ունենալով պարզաբանել օրենքի դրույթները՝ կապված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ռեզիդենտների կողմից շահութահարկի հաշվարկման և բյուջե վճարման հարցերի հետ.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. Հաստատել «Ռեզիդենտների կողմից շահութահարկի հաշվարկման և վճարման կարգի մասին հրահանգը» (կցվում է):
2. Ուժը կորցրած ճանաչել
 - ՀՊՎ պետի 19.04.99թ. թիվ 04 հրամանով հաստատված «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի համաձայն հարկի հաշվարկման և վճարման որոշ հարցերի վերաբերյալ» հրահանգչական նամակը.
 - 31.03.00թ. «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի համաձայն հարկի հաշվարկման և վճարման որոշ հարցերի վերաբերյալ» հրահանգչական նամակում փոփոխություններ կատարելու մասին» թիվ 14/Ղ հրամանը.
 - 25.04.00թ. թիվ 15/Ղ հրամանով հաստատված «Ռեզիդենտների շահութահարկի կանխավճարների վերաբերյալ» հրահանգչական նամակը.
 - 05.10.00թ. թիվ 32/Ղ հրամանով հաստատված «ԱԱՀ-ի մասին» ԼՂՀ օրենքի 24 հոդվածի և «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 39 հոդվածի վերաբերյալ» հրահանգը.
 - 24.09.01թ. «Ռեզիդենտների կողմից հարկային մարմիններ ներկայացվող փաստացի շահութահարկի հաշվարկի ձևը» հաստատելու մասին թիվ 18/Ղ հրամանը:

Հարկային պետական
վարչության պետ
հ/ծ 3-րդ դասի պետական խորհրդական

Հ. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Հ Ր Ա Հ Ա Ն Պ

Ռեզիդենտների կողմից շահութահարկի հաշվարկման և վճարման կարգի մասին

Սույն հրահանգը նշակված է ի կատարումն «Շահութահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 69-րդ հոդվածի և նպատակ ունի պարզաբանել օրենքի դրույթները կապված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ռեզիդենտների կողմից շահութահարկի հաշվարկման և բյուջե վճարման հարցերի հետ ԼՂՀ ոչ ռեզիդենտների կողմից շահութահարկի հաշվարկման և բյուջե վճարման հարցերը կարգավորվում են առանձին հրահանգով:

1. Շահութահարկի հասկացությունը և հաշվարկման ընդհանուր հիմքը

1.1. Շահութահարկը սույն հրահանգի 2.1 կետում նշված հարկատուների կողմից «Շահութահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ է:

1.2. Շահութահարկը որոշելիս հաշվառումն իրականացվում է հաշվապահական հաշվառումը և ֆինանսական հաշվետվությունները կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված սկզբունքների և կանոնների հիման վրա, եթե «Շահութահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով չեն նախատեսվում դրանց կիրառման առանձնահատկություններ:

1.3. Սույն հրահանգի 2.1 կետում նշված հարկատուները շահութահարկի հաշվարկի ներկայացման ժամկետում (մինչև ընթացիկ տարվա ապրիլի 15-ը) հարկային մարմիններին գրավոր տեղեկացնում են հաշվետու տարում և հետագա տարիների համար իրենց ընտրած հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվությունների սկզբունքների և կանոնների, ինչպես նաև դրանց փոփոխությունների մասին (եթե վերջիններիս, օրենքով կամ այլ իրավական ակտով, նման ընտրության իրավունք վերապահված է)՝ ղեկավարվելով ԼՂՀ հարկային պետական վարչության կողմից 2003թ. նոյեմբերի 11-ի թիվ 53/Ղ հրամանով հաստատված «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 3 հոդվածի վերաբերյալ հրահանգչական նամակ»-ի դրույթներով:

1.4. Հարկվող շահույթը որոշելիս ակտիվները և պարտավորությունները հաշվի են առնվում սկզբնական (ծեռքբերման) արժեքով, բացառությամբ օրենքով սահմանված կարգով իրականացված վերագնահատման արդյունքների:

1.5. Հարկվող շահույթը որոշելիս հաշվի են առնվում միայն սույն հրահանգով սահմանված պահուստների (պահուստաֆոնդերի) ստեղծման հետևանքով առաջացող եկամուտները և նվազեցումները:

2. Շահութահարկ վճարողները

2.1. Շահութահարկ վճարող են հանդիսանում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հետևյալ ռեզիդենտները.

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ստեղծված (օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան մարմիններում պետական գրանցում ստացած, հաշվառված) առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունները (այդ թվում բանկերը, վարկային կազմակերպությունները և ապահովագրական կազմակերպությունները), իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները:

Դրանք են՝

ա) տնտեսական ընկերակցություններ (լիակատար ընկերակցություն, վստահության վրա հիմնված ընկերակցություն (կոմանդիտային ընկերակցություն))

բ) տնտեսական ընկերություն (սահմանափակ, կամ լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերություն, բաժնետիրական (բաց և փակ) ընկերություն).

գ) անհատական (ընտանեկան) ձեռնարկությունները

դ) կոոպերատիվները.

ե) հիմնադրամները

զ) հասարակական միավորումները

է) իրավաբանական անձանց միությունները

ը) օրենքով նախատեսված այլ ձևեր:

Սույն հրահանգի 2.1 կետում նշված սուբյեկտները հրահանգում այսուհետ կանվանվեն հարկատուներ:

Սույն հրահանգի կիրարկման առումով հարկատու իրավաբանական անձանց և իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների նկատմամբ կիրառվում է շահութահարկին վերաբերվող Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հարկման միևնույն կարգը (հաշվարկման կարգ, դրույթաչափ, արտոնություններ, հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվության սկզբունքների և կանոնների ընտրելու հնարավորություն, հաշվապահական հաշվետվությունների և շահութահարկի հաշվարկի ներկայացման կարգ, հարկի վճարման կարգ և այլն):

2.2 Հարկատուներ (շահութահարկի գծով) չեն հանդիսանում.

2.2.1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բյուջետային հիմնարկները:

Բյուջետային հիմնարկի բնորոշումը տրված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով:

Նշված օրենքի դրույթների համաձայն բյուջետային հիմնարկ են հանդիսանում պետական և տեղական ինքնակառավարման լիազորություններն իրականացնող իրավաբանական անձինք, որոնց պահպանման ծախսերն ամբողջությամբ ֆինանսավորվում են համապատասխան բյուջեների միջոցների հաշվին:

Սույն հրահանգի կիրարկման տեսանկյունից ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու դեպքում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի համաձայն, անձը դադարում է բյուջետային հիմնարկ լինել և գործունեության այդ մասով հարկային պարտավորությունները հաշվարկվում են օրենքով սահմանված կարգով:

3. Շահութահարկով հարկվող օբյեկտը

3.1. Սույն հրահանգի 2.1 կետում նշված հարկատուների համար հարկվող օբյեկտ է համարվում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող շահույթը:

3.2. Հարկվող շահույթը հարկատուի համախառն եկամտի (հաշվետու տարում հարկատուի բոլոր եկամուտների հանրագումարի՝ անկախ դրանց ստացման աղբյուրներից) և սույն հրահանգում նշված նվազեցումների (հաշվի առած նաև համախառն եկամտից նվազեցվող արտոնությունները) դրական տարբերությունն է:

4. Հարկատուի եկամուտները

4.1. Եկամուտ են համարվում, մասնավորապես՝

4.1.1. Ապրանքների, արտադրանքի, ծառայությունների, ինչպես նաև հարկատուի հիմնական միջոցների, արժեթղթերի և այլ ակտիվների իրացումից ստացվող հասույթը (զուտ հասույթը՝ հասույթը առանց փոխհատուցվող (անուղղակի) հարկերի):

4.1.2. Փոխառության դիմաց ստացվող տոկոսները և այլ հատուցումը (այսուհետ՝ տոկոսներ):

4.1.3. Վարձակալության դիմաց ստացվող վճարները և այլ հատուցումը (այսուհետ՝ վարձավճարներ):

4.1.4. Գրականության, արվեստի կամ գիտական աշխատանքի օգտագործման, կամ օգտվելու իրավունքի համար ցանկացած հեղինակային իրավունքից, ցանկացած արտոնագրից, ապրանքային նշանից, նախագծից կամ մոդելից, պլանից, գաղտնի բանաձևից կամ գործընթացից, էլեկտրոնային հաշվողական մեքենաների և տվյալների բազայի համար ծրագրերի կամ արդյունաբերական, առևտրային, գիտական սարքավորումներն օգտագործելու կամ օգտվելու համար իրավունքի, կամ արդյունաբերական, տեխնիկական, կազմակերպական, առևտրային, գիտական փորձի վերաբերյալ տեղեկության տրամադրման համար ստացվող հատուցումը (այսուհետ՝ ռոյալթի):

4.1.5. Շահաբաժինները

4.1.6. Ապահովագրական հատուցումները, որոնք ստացել են վերաապահովագրության պայմանագրերի համաձայն ապահովագրող հանդիսացող հարկատուները, ինչպես նաև այն ապահովագրական հատուցումների գումարները, որոնք ստացել են ապահովադիր հանդիսացող հարկատուները:

4.1.7. Պարտքերի կամ առևտրային գործարքների ֆինանսավորման, ֆակտորինգային այլ գործառնությունների իրականացումից ստացվող եկամուտները:

Ֆակտորինգը տնտեսվարող սուբյեկտների միջև ապրանքների և ծառայությունների իրացման ժամանակ առևտրային վարկի պայմաններով առաջացած պարտավորությունների (վճարային փաստաթղթերի) պահանջատիրոջ իրավունքների ստանձնումն է ֆակտորի կողմից, որը զուգակցվում է նաև հաշվապահական, տեղեկատվական, ապահովագրական և այլ ծառայությունների մատուցմամբ:

Առևտրային վարկը մի տնտեսավարող սուբյեկտի կողմից մեկ այլ սուբյեկտին ապրանքների տրամադրումն է (ծառայությունների մատուցումը) դրանց դիմաց վճարման ենթակա գումարը նրանց միջև կնքվող պայմանագրում նշված ժամկետում և տոկոսային հավելավճարով վճարելու պայմանով:

4.1.8. Ֆյուչերսների, օպցիոնների և նման այլ գործարքներից ստացվող եկամուտները:

Ֆյուչերսային պայմանագիրն արժեթուղթ է, որով մի կողմը պարտավորվում է (սովորաբար որոշակի գրավի դիմաց) սահմանված քանակով, հաստատագրված գներով և ժամկետներում մյուս կողմից ձեռք բերել կամ նրան վաճառել որևէ ապրանք (այդ թվում՝ արժեթուղթ կամ արժույթ):

Ֆորվարդային պայմանագիրն արժեթուղթ է, որով մի կողմը պարտավորվում է (սովորաբար որոշակի գրավի դիմաց) սահմանված ժամկետներում, մյուս կողմից գործարքի կնքման պահին շուկայում ձևավորված գնով ձեռք բերել կամ նրան վաճառել որևէ ապրանք (այդ թվում՝ արժեթուղթ կամ արժույթ):

Օպցիոն պայմանագիրն արժեթուղթ է, որով մի կողմը (սովորաբար որոշակի գրավի դիմաց) մյուս կողմին իրավունք է տալիս սահմանված ժամկետով և իր անունից ձեռք բերել կամ վաճառել որոշակի քանակի ապրանք, արժույթ և արժեթուղթ (այդ թվում՝ ֆյուչերսային կամ ֆորվարդային պայմանագիր):

4.1.9. Անհատույց ստացվող (ընդունման-հանձնման փաստաթղթերով, իսկ փաստաթղթերում արժեքի բացակայության դեպքում՝ փորձաքննության եղանակով որոշված արժեքը) ակտիվները, պարտավորությունների զեղչումից կամ ներումից ստացվող եկամուտները, բացառությամբ օրենքով տրվող հարկային արտոնությունների գումարների:

Սույն հրահանգի իմաստով անհատույց ստացված ակտիվները, եկամուտն են համարվում այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դրանք ձանաչվում են դրպես ծախս կամ կորուստ՝ անկախ այդ ծախսը կամ կորուստը համախառն եկամտից նվազեցնելու հանգամանքից:

Անհատույց ստացված ակտիվների մասով սույն ենթակետի դրույթները, կիրառվում են միայն առևտրային կազմակերպությունների շահութահարկը հաշվարկելիս:

4.1.10. Հարկատուին պատճառված վնասի (կրած կորստի) հատուցումից ստացվող եկամուտները:

4.1.11. Տույժերի, տուգանքների և գույքային այլ սանկցիաների տեսքով եկամուտները:

4.1.12. Անվավեր ձանաչված գործարքներից ստացվող եկամուտները:

4.1.13. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած կարգով դուրս գրված անհուսալի կրեդիտորական պարտքերի գումարները:

4.1.14. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած կարգով նախկինում հաշվեկշիռից դուրս գրված անհուսալի դեբիտորական պարտքերի մարման գումարը, իսկ դուրս չգրված պարտքի մարման դեպքում՝ սահմանված կարգով դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստին կատարված մասհանումների գումարը:

4.1.15. Հաշվետու տարում հայտնաբերված՝ դրան անմիջապես նախորդող երեք տարիներում պակաս ցույց տրված եկամուտը և (կամ) ավել ցույց տրված նվազեցումը:

4.1.16. Բանկային երաշխիքների տրամադրման, հոժարագրային (ակցեպտային) գործառնությունների գծով ստացվող եկամուտները:

4.1.17. Հավատարմագրային (լիազորագրային), կառավարման կամ ուրիշ ձևով այլ անձանց արժեթղթերը և ներդրումները կառավարելու, բրոքերային և ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ մատուցելու դիմաց ստացվող եկամուտները:

4.1.18. Մուրհակների, չեկերի, վճարագրերի, վճարային այլ արժեթղթերի, վճարային փաստաթղթերի, քարտերի և ֆինանսական այլ գործիքների թողարկման, գեղչման, փոխանցման, գիջման կամ սպասարկման դիմաց ստացվող եկամուտները:

4.1.19. Ապահովագրական պահուստներից հատուցման նպատակով վերադարձվող միջոցները:

4.1.20. Վերաապահովագրության պայմանագրերի համաձայն ստացվող կոմիսիոն վարձատրությունները:

4.1.21. Գուքագրման և ստուգումների ժամանակ բացահայտված հիմնական միջոցների, ապրանքանյութական արժեքների, դրամական միջոցների և այլ գույքի ավելցուկը: Դրանք գնահատվում են տվյալ հարկատուի մոտ առկա համանման արժեքով, իսկ դրանց բացակայության դեպքում՝ փորձաքննության եղանակով որոշված արժեքով:

4.1.22. Այլ եկամուտները:

4.2. Շահութահարկի հաշվարկման նպատակով եկամուտ չեն համարվում

4.2.1. Մասնակիցների (բաժնետեր, փայտեր, անդամ) կողմից հարկատուի կանոնադրական կապիտալում (հիմնադրամում) կատարված ներդրումները:

4.2.2. Հարկատուի բաժնետոմսերի տեղաբաշխման գնի և անվանական արժեքի դրական տարբերությունը:

4.2.3. Համատեղ գործունեության նպատակով միավորվող միջոցները:

4.2.4. Արտարժույթի և արտարժույթով արտահայտված այլ ակտիվների և պարտավորությունների, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով իրականացված հիմնական միջոցների վերագնահատման դրական արդյունքը:

4.2.5. Օրենքով տրվող հարկային արտոնությունների գումարները:

4.2.6. Ոչ առևտրային կազմակերպությունների անհատույց ստացված ակտիվները (այդ թվում անդամավճարները) և ծառայությունները:

5. Համախառն եկամտի նվազեցումները

Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամտից նվազեցվում են ծախսերը, կորուստները և այլ նվազեցումները:

Նվազեցումների միևնույն գումարը համախառն եկամտից հանվում է միայն մեկ անգամ:

5.1. Ծախսերը

Համախառն եկամտից նվազեցվում են դրա ստացման հետ կապված անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսերը:

ա) ծախս է համարվում հաշվետու տարվա ընթացքում ակտիվների ասորտահոսքը, նվազումը կամ պարտավորությունների աճը, որոնք հանգեցնում են հարկատուի սեփական կապիտալի նվազեցման

բ) անհրաժեշտ են համարվում անմիջականորեն և բացառապես ապրանքների արտադրության, ծառայությունների մատուցման, շուկայում առաջխաղացման և (կամ) ապրանքների (ծառայությունների) իրացման, խորհրդատվական և իրավաբանական ծառայությունների, ուղեկցման, երաշխիքային հսկողության և շահագործման ընթացքում բացահայտված թերությունների վերացման, արտադրության (շինարարության) նախապատրաստման, յուրացման և կոնսերվացման, գույքի պահպանման, կադրերի պատրաստման համար հարկատուի կատարած ծախսերը, ինչպես նաև եկամտի ստացման հետ կապված և դրա համար անհրաժեշտ այլ ծախսերը:

Ապրանքանյութական պաշարների, աշխատանքների, ծառայությունների, հիմնական միջոցների և այլ ակտիվների ձեռք բերման (և համապատասխան դեպքերում՝ այլ հարկատուների եկամուտներն վերաբերող) փաստաթղթերի հիմնավորման նկատմամբ ներկայացվող պահանջները սահմանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:

Ծախսերի թվին են դասվում, մասնավորապես՝

5.1.1. Նյութական (արտադրական բնույթի, վարչական և ընդհանուր տնտեսական նշանակության, իրացման (կոմերցիոն) բնույթի) ծախսերը:

Այստեղ ներառվում է նյութական ռեսուրսների (ապրանք, հումք, նյութեր, վառելիք, էներգիայի բոլոր տեսակներ, սահմանված կարգով անմիջականորեն դուրս գրվող գործիքներ, հարմարանքների, սարքեր, լաբորատոր սարքավորումներ, հատուկ հագուստներ և այլ փոքրաթեք առարկաներ, համալրող շինվածքներ, կիսապատրաստույթներ, պահեստամասեր, դետալներ, տարա և այլն) արժեքը, որոնք հարկատուի գործունեության ընթացքում անմիջականորեն սպառվում են կամ իրենց արժեքն ամբողջությամբ փոխանցում են արտադրվող արտադրանքին, մատուցվող ծառայությանը (կապիտալացվում են):

Նյութական ռեսուրսները «նյութական ծախսեր» տարրում արտացոլվում են սկզբնական արժեքով, որը ձևավորվում է փաստացի ձեռք բերման գներից (անհատույց ստացվածները՝ ընդունման-հանձնման փաստաթղթերի տվյալներով և, եթե այդ փաստաթղթերում նշված չէ գույքի արժեքը, ապա այն գնահատվում է տվյալ հարկատուի մոտ առկա համանման գույքի արժեքով, իսկ դրա բացակայության դեպքում՝ փորձաքննության եղանակով որոշված արժեքով), իսկ կանոնադրական կապիտալին հիմնադիրների կողմից իրենց ավանդների դիմաց ներդրվածները՝ ըստ կողմերի պայմանավորվածության) և մինչև պահեստ տեղափոխման (փոխադրման) հետ կապված բոլոր ծախսերից (մատակարարող և վաճառահանող կազմակերպությունների վերադիրները (հավելավճարները), կոմիսիոն վարձահատուցումները, ապրանքային և ֆոնդային բորսաների ծառայությունների՝ ներառյալ բրոքերային ծառայությունների արժեքը, բեռնման-բեռնաթափման աշխատանքների, տրանսպորտային ծառայությունների արժեքը, եթե դրանք կատարվում են կողմնակի կազմակերպությունների կողմից, ինչպես նաև ներմուծման համար սահմանված մաքսատուրքերը, մաքսային ծառայության համար կատարված վճարները և տեղափոխման հետ կապված ապահովագրական վճարները) առանց փոխհատուցվող հարկերի:

Օրենսդրությամբ նախատեսված դեպքերում նյութական ռեսուրսները կարող են գնահատվել այլ արժեքով:

5.1.2. Աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումները, որի մեջ ներառվում են հարկատուների, ինչպես հիմնական արտադրական և ոչ արտադրական անձնակազմի, այնպես էլ պայմանագրային աշխատողների կողմից փաստացի կատարված աշխատանքների դիմաց հաշվարկված աշխատավարձը, ներառյալ խթանող և փոխհատուցող վճարները:

Խթանող վճարներ են համարվում մասնավորապես արտադրական ցուցանիշների համար պարգևատրումները, տարվա աշխատանքի արդյունքների համար պարգևատրումը, պրոֆեսիոնալ վարպետության համար տրվող հավելումները, երկարամյա ծառայության համար արտադրական աշխատողներին տրվող միանվագ պարգևատրումները (տվյալ տնտեսությունում մասնագիտության գծով աշխատանքային ստաժի համար հավելավճարները):

Փոխհատուցող վճարներ (կապված աշխատանքային ռեժիմի և պայմանների հետ) են համարվում գիշերային աշխատանքի, արտաժամյա աշխատանքի, հանգստյան և տոն (ոչ

աշխատանքային) օրերի, բազմաժամանակեցում աշխատանքի, մասնագիտությունների համատեղման, սպասարկման գոտիների ընդլայնման, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծանր, վնասակար և խիստ վնասակար համարվող աշխատանքի պայմաններում աշխատանքի համար աշխատավարձի նկատմամբ սահմանված հավելավճարներն ու լրավճարները:

Աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների մեջ են ներառվում նաև հերթական (ամենամյա) և լրացուցիչ արձակուրդների վարձատրությունը (չօգտագործված արձակուրդի համար փոխհատուցումը), անչափահասների արտոնյալ ժամերի, կերակրող մայրերին աշխատանքի ընթացքում տրվող ընդմիջումների, ինչպես նաև պետական պարտականությունների կատարման հետ կապված ժամանակի վարձատրությունը, աշխատանքի անվտանգությունն ապահովելու նպատակով բժշկական հետազոտությունների գծով ծախսումները, աշխատավարձի մասնակի պահպանմամբ հարկադրված արձակուրդում գտնվող աշխատողներին վճարվող գումարները, աշխատող դոնորներին հետազոտվելու (գննում), արյուն հանձնելու և յուրաքանչյուր անգամ արյուն հանձնելուց հետո հատկացվող հանգստի օրերի համար կատարվող վճարումները, աշխատողների աշխատանքի վարձատրությանն ուղղված այլ վճարումները:

Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամտից նվազեցվում են հատուկ սննդի, արտահագուստի և այլ հանդերձանքի, աշխատողներին օրենսդրությամբ նախատեսված այլ փոխհատուցումների ծախսերը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանված չափի սահմաններում:

5.1.3. Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները: Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները հարկատուների կողմից կատարվում են «Պարտադիր սոցիալական ապահովագրության մասին» ԼՂՀ օրենքով սահմանված կարգով և չափերով՝ աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներից:

5.1.4. Ամորտիզացիոն մասհանումները՝ հարկատուի գործունեությանը բազմակի անգամներ մասնակցող ակտիվների ամորտիզացիայի (մաշվածության գումարները), որոնց մեջ ներառվում են.

ա) հիմնական միջոցների վերականգնման համար ամորտիզացիոն մասհանումները:

Հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումների գումարը հաշվարկվում է ելնելով հիմնական միջոցների տվյալ խմբի համար ստորև բերված ամորտիզացիոն նվազագույն ժամկետներից՝

- շենքերի, շինությունների և փոխանցող հարմարանքների համար, բացառությամբ սույն խմբին անմիջապես հաջորդող խմբում նշվածների 20 տարի
- հյուրանոցների, պանսիոնատների, հանգստյան տների, առողջարանների, կրթական և ուսումնական հաստատությունների շենքերի և շինությունների համար՝ 10 տարի
- չնշված հոսքային գծերի, ռոբոտատեխնիկայի համար՝ 3 տարի
- հաշվողական և համակարգչային տեխնիկայի 1 տարի
- այլ հիմնական միջոցների, այդ թվում՝ բանող անասունների, բազմամյա տնկիների և հողերի՝ բարելավմանն ուղղված կապիտալ ներդրումների համար՝ 5 տարի

Պատերազմական գործողություններից տուժած գոտում գտնվող՝ սույն ենթակետի առաջին և երկրորդ խմբերում թվարկված հիմնական միջոցների ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանվում է մեկ տարի:

Սույն մասում նշված՝ պատերազմական գործողություններից տուժած գոտու տարածքը սահմանում է ԼՂՀ կառավարությունը:

Մինչև 50 հազար դրամ արժողությամբ հիմնական միջոցների ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանվում է մեկ տարի:

Հարկատուին իրավունք է վերապահված իր հայեցողությամբ ընտրելու հիմնական միջոցների ամորտիզացիոն այլ նվազագույն ժամկետ, բայց ոչ պակաս տվյալ խմբի համար վերը նշված ժամկետներից:

Հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումների տարեկան մեծությունը հաշվարկվում է որպես այդ հիմնական միջոցների սկզբնական արժեքի, իսկ օրենքով սահմանված կարգով վերագնահատման իրականացման դեպքում՝ վերագնահատված արժեքի և տվյալ խմբի համար վերը նշված ամորտիզացիոն ժամկետի հարաբերություն:

Ամորտիզացիոն մասհանումների չափը 1998թ. հունվարի 1-ի դրությամբ առկա հիմնական միջոցների նկատմամբ որոշելու համար 1998թ. հունվարի 1-ից հետո ամորտիզացիոն (մնացորդային) նվազագույն ժամկետը որոշում է որպես չամորտիզացված արժեքի գործակցի և հիմնական միջոցի տվյալ խմբի ամորտիզացիոն նվազագույն ժամկետի արտադրյալ.

$$\text{ժՆ} = (U - U) \times \text{ժ}/U$$

որտեղ՝

ժՆ-ն՝ մինչև 1998թ. հունվարի 1-ը ձեռք բերված հիմնական միջոցի ամորտիզացիոն (մնացորդային) նվազագույն ժամկետն է.

U-ն՝ հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքն է 1998թ. հունվարի 1-ի դրությամբ.

Մ-ն՝ հիմնական միջոցի մաշվածության գումարն է 1998թ. հունվարի 1-ի դրությամբ.

Ժ-ն՝ հիմնական միջոցների տվյալ խմբի ամորտիզացիոն նվազագույն ժամկետն՝ վերը նշված աղյուսակի համաձայն:

Ամորտիզացիոն մասհանումների հաշվարկման նպատակով մինչև 1998թ. հուլիսի 1-ը ձեռք բերված հիմնական միջոցների սկզբնական արժեք է համարվում 1997թ. հուլիսի դրությամբ դրանց հաշվեկշռային արժեքը (վերջիններիս սկզբնական արժեքը հաշվի առած օրենսդրությամբ սահմանված կարգով մինչև 1997թ. հուլիսի 1-ը դրանց գծով կատարված վերագնահատումները), իսկ շահութահարկի տարեկան հաշվարկ ներկայացնողների համար՝ 1997թ. հունվարի 1-ի դրությամբ հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը (վերջիններիս սկզբնական արժեքը՝ հաշվի առած օրենսդրությամբ սահմանված կարգով մինչև 1997թ. հունվարի 1-ը դրանց գծով կատարված վերագնահատումների) հաշվի առնելով հիմնական միջոցների արժեքի վրա կատարվող ավելացումները:

1998թ. հունվարի 1-ից հետո ձեռք բերված հիմնական միջոցների համար ամորտիզացիոն ժամկետ է համարվում վերը նշված աղյուսակով սահմանված ժամկետները:

Տարվա ընթացքում նոր հիմնական միջոցներ մուտքագրելու դեպքում հարկատուները հաշվետու տարում վերջիններիս գծով ամորտիզացիոն մասհանումները հաշվարկում են այդ հիմնական միջոցները իրենց հաշվեկշիռ մուտքագրելու ամսվան հաջորդող ամսվանից սկսած:

Լրիվ ամորտիզացված հիմնական միջոցների գծով ամորտիզացիոն մասհանումներ չեն կատարվում:

Հարկվող շահույթը որոշելիս հիմնական միջոցների վերագնահատման արդյունքները հաշվի չեն առնվում (բացի մինչև 1997թ. հուլիսի 1-ը, իսկ նախկին կարգի համաձայն շահութահարկի տարեկան հաշվարկներ ներկայացնողների համար՝ 1997թ. հունվարի 1-ը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգին համաձայն կատարված վերագնահատումներից), բացառությամբ օրենքով սահմանված կարգով իրականացված վերագնահատման արդյունքների:

Դա մասնավորապես ենթադրում է, որ.

- վերագնահատման արդյունքում առաջացած հիմնական միջոցների արժեքի աճը գնում է հարկատուի լրացուցիչ կապիտալի ավելացմանը, հետևաբար, հիմնական միջոցների գծով ամորտիզացիոն մասհանումները (դրանց վերագնահատումից հետո ևս (բացի վերը նշված վերագնահատումներից)) պետք է կատարվեն վերջիններիս սկզբնական արժեքից ելնելով.

- հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամտից նվազեցումների մեջ հիմնական միջոցների օտարման դեպքում (բացի անհատույց տրամադրումը) մտցվում է վերջիններիս մնացորդային արժեքը (սկզբնական արժեքի և ամորտիզացիոն մասհանումների տարբերությունը):

բ) Վարձակալի կողմից երկարաժամկետ վարձակալված (ֆինանսական վարձակալություն) հիմնական միջոցների համար կատարվող ամորտիզացիոն մասհանումները:

Վարձակալի կողմից երկարաժամկետ վարձակալված (ֆինանսական վարձակալություն) հիմնական միջոցների գծով ամորտիզացիոն մասհանումները կատարվում են սույն կետի «ա» ենթակետում նշված կարգով և տվյալ հիմնական միջոցների գծով վերը նշված ամորտիզացիոն նվազագույն ժամկետներից ելնելով: Այս դեպքում վարձատուն ամորտիզացիոն մասհանումներ չի կատարում:

գ) Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումները:

Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ժամկետը որոշվում է հարկատուի կողմից՝ ելնելով դրանց հնարավոր օգտագործման ժամկետներից: Այդ ժամկետների որոշման անհնարինության դեպքում ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն նվազագույն ժամկետ է սահմանվում 10 տարի, բայց ոչ ավել, քան հարկատուի գործունեության ժամկետն է:

Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումների տարեկան մեծությունը հաշվարկվում է որպես դրանց սկզբնական արժեքի և ոչ նյութական ակտիվների համար սահմանված (որոշված) ամորտիզացիոն ժամկետի հարաբերություն:

Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամտից նվազեցումների մեջ ոչ նյութական ակտիվների օտարման դեպքում (բացառությամբ անհատույց տրամադրումը) մտցվում է վերջիններիս մնացորդային արժեքը (սկզբնական արժեքի և կատարված ամորտիզացիոն մասհանումների տարբերությունը):

դ) Փոքրարժեք և արագամաշ առարկաների գծով ծախսերը՝ կազմակերպությունում ընդունված հաշվապահական հաշվառման քաղաքականությանը համապատասխան: Եթե կազմակերպությունը չի ներկայացրել փոքրարժեք և արագամաշ առարկաների գծով հաշվապահական հաշվառման քաղաքականություն, ապա փոքրարժեք և արագամաշ առարկաների արժեքը մարվում է.

- շահագործման հանձնման պահին 50 տոկոսի չափով և դուրս գրման պահին՝ մնացած 50 տոկոսի չափով, մաշվածքի հաշվարկման միջոցով,

- շահագործման հանձնման պահին 100 տոկոսի չափով, մաշվածքի հաշվարկման միջոցով:

Ընդ որում, եթե փոքրարժեք և արագամաշ առարկաների մեկ միավորի արժեքը չի գերազանցում 10.0 հազ. դրամը, կարող են դուրս գրվել ծախսերով՝ արտադրության բացթողնման կամ շահագործման հանձնման պահին:

Աեզոնային և ժամանակավոր ճանապարհների, մինչև 2 տարի շահագործման ժամկետով ժամանակավոր կառույցների, հատուկ գործիքների և հարմամարանքների, փոխարինվող սարքավորումների արժեքը մարվում է ըստ համապատասխան սահմանված նորմայի կամ նախահաշվային դրույթի, որը հաշվարկվում է ելնելով դրանց կառուցման, պատրաստման (ծեռք բերման) ծախսերի նախահաշվից և այդ ճանապարհների, կառույցների, գործիքների ու հարմարանքների օգնությամբ պլանավորված արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) թողարկումից:

Թույլատրվում է անհատական պատվերների կատարման համար նախատեսված հատուկ գործիքների և հարմարանքների արժեքն ամբողջությամբ մարել դրանց՝ արտադրության բացթողման պահին:

5.1.5. Ապահովագրական վճարները:

Այստեղ մասնավորապես ներառվում են որպես ապահովագիր հանդես եկող հարկատուի գույքի (հիմնական միջոցների, արտադրական պաշարների, պատրաստի արտադրանքի և համապատասխան այլ ակտիվների) ապահովագրության նպատակով մուծված ապահովագրավճարների գումարները (բացի սույն հրահանգի 5.1.1. ենթակետում նշված տեղափոխման հետ կապված ապահովագրական վճարներից), ինչպես նաև ապահովագիր հանդես եկող հարկատուների կողմից իր աշխատողների համար մուծված ապահովագրավճարների գումարները, եթե այդ վճարումների կատարումը պարտադրված է օրենքով:

5.1.6. Չփոխհատուցվող (չհաշվանցվող) հարկերը, տուրքերը (բացի սույն հրահանգի 5.1.1. ենթակետում նշված մաքսատուրքերից) և այլ պարտադիր վճարները, եթե դրանք չեն ներառվել ձեռք բերված հիմնական միջոցի, հումքի, նյութի ապրանքի և այլ ակտիվների արժեքի մեջ:

5.1.7. Վարկերի և այլ փոխառությունների տոկոսները:

Այստեղ մասնավորապես ներառվում են հարկատուների կողմից ստացված բոլոր տեսակի վարկերի (կարճաժամկետ (մեկ տարուց ոչ ավելի մարման ժամկետով), երկարաժամկետ (մեկ տարուց ավելի մարման ժամկետով), տարկետված, հետաձգված, երկարաձգված, ժամկետանց), դրամական և գույքային փոխառությունների (այդ թվում նաև արտարժույթով ստացվածներին) և այլ ներգրավված միջոցների դիմաց հաշվարկված տոկոսները, գույքի երկարաժամկետ (ֆինանսական) վարձակալության դիմաց հաշվարկված տոկոսները:

5.1.8. Երաշխիքների, երաշխավորությունների, ակրեդիտիվների ու վարկային կազմակերպությունների այլ բանկային ծառայությունների համար վճարները:

5.1.9. Գովազդային ծախսերը, ներառյալ ցուցահանդեսներին, տոնավաճառներին մասնակցությունը, ցուցահանդեսների և տոնավաճառների կազմակերպման միջոցառումների հետ կապված ծախսերը, ապրանքների նմուշների արժեքը, որոնք պայմանագրերի համաձայն անվճար տրվում են անմիջականորեն գնորդներին կամ միջնորդներին և ենթակա չեն վերադարձման:

Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամտից նվազեցվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում գովազդի ծախսերն՝ ամբողջությամբ, իսկ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքից դուրս գովազդի ծախսերը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած չափի սահմաններում:

5.1.10. Ներկայացուցչական ծախսերը:

Ներկայացուցչական ծախսերը հարկատուի կողմից փոխշահավետ համագործակցություն հաստատելու և պահպանելու նպատակով բանակցություններ վարելու համար այլ կազմակերպությունների ներկայացուցիչների և անհատ ձեռնարկատերերի պաշտոնական ընդունելության և սպասարկման ծախսերն են: Այդ ծախսերի մեջ մասնավորապես ներառվում են ներկայացուցիչների (մասնակիցների) պաշտոնական ընդունելիության (նախաձաշ, ճաշ կամ այլ համանման միջոցառում), նրանց տրանսպորտային և հյուրանոցային ապահովման, կուլտուրական միջոցառումների կազմակերպման, բանակցությունների և կուլտուրական միջոցառումների ծրագրի ժամանակ բուֆետային սպասարկման, հուշանվերների, կազմակերպության հաստիքացուցակում չգտնվող թարգմանիչների ծառայության վճարման հետ կապված ծախսերը:

Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամտից նվազեցվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած չափը չզերազանցող ներկայացուցչական ծախսերը:

5.1.11. Մարքեթինգի (ապրանքային և ծառայությունների շուկայի ուսումնասիրություն, ապրանքային և ծառայությունների շուկայում առաջխաղացում) հետ կապված ծախսերը:

Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամտից նվազեցվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում մարքեթինգի ծախսերն՝ ամբողջությամբ, իսկ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքից դուրս մարքեթինգի ծախսերը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած չափի սահմաններում:

5.1.12. Գործուղման ծախսերը

Գործուղման ծախսը իրենից ներկայացնում է հարկատուի աշխատողների աշխատանքի մշտական վայրից դուրս որոշակի ժամկետով այլ վայրում հանձնարարություն կատարելու հետ կապված տրվող վճարները:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքից դուրս գործուղման ծախսերը (մասնավորապես՝ օրապահիկ, գիշերավարձ, ժամանակավոր գրանցման հետ կապված ծախսեր և այլն), ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում օրապահիկի ծախսերը

հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամտից նվազեցվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից հաստատված չափի սահմաններում:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս գործուղման ծախսերի ձևակերպման ժամանակ առանց հիմնավորող փաստաթղթերի օրապահիկի ծախսերը հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամտից նվազեցվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած չափը չգերազանցող մասով:

5.1.13. Ղատական ծախսերը:

5.1.14. Հարկատուի կողմից այլ անձանց պատճառված վնասի հատուցումը:

5.1.15. Քաղաքացիաիրավական պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու (տնտեսական պայմանագրերի պայմանները խախտելու) համար գանձվող տույժերը, տուգանքները և գույքային այլ պատժամիջոցները, բացառությամբ պետական և համայնքների բյուջեներ գանձվող տույժերի, տուգանքների և գույքային այլ պատժամիջոցների:

5.1.16. Աշխատողների (աշխատուժի) հավաքագրման ծախսերը:

5.1.17. Աուդիտորական, իրավաբանական, այլ խորհրդատվական, տեղեկատվական և կառավարման ծառայությունների ծախսերը:

5.1.18. Ֆակտորինգային, հավատարմագրային (լիազորագրային) գործառնությունների ծախսերը:

5.1.19. Հաշվետու տարում հայտնաբերված՝ դրան անմիջապես նախորդող երեք տարիներում պակաս ցույց տրված ծախսերը:

5.1.20. Վարձակալված հիմնական միջոցների դիմաց վարձակալական վճարները և վարձակալության հետ կապված այլ ծախսումները:

5.1.21. Կադրերի պատրաստման և վերապատրաստման համար ծախսերը՝ ներառյալ կրթաթոշակների վճարման հետ կապված ծախսերը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքից դուրս նման բնույթի ծախսերը հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամտից նվազեցվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից հաստատված նորմաների սահմաններում:

5.1.22. Ծառայության երաշխիքային ժամկետ ունեցող արտադրատեսակների (ապրանքների) երաշխիքային նորոգման և սպասարկման ծախսերը:

5.1.23. Գրասենյակային, փոստային, հեռախոսային, հեռագրային և նմանատիպ այլ ծառայությունների հետ կապված ծախսերը:

5.1.24. Արտադրանքի սերտիֆիկացման աշխատանքների վճարման հետ կապված ծախսերը:

5.1.25. Պարապուրդի ժամանակ վճարվող գումարները:

5.1.26. Աշխատունակությունը ժամանակավորապես կորցրած աշխատողներին մինչև փաստացի աշխատավարձի չափը ապահովելու համար տրվող լրավճարները:

5.1.27. Կոնսերվացված արտադրական հզորությունների և օբյեկտների պահպանման հետ կապված ծախսերը:

5.1.28. Խոտանից կորուստները:

Այստեղ ներառվում են հայտնաբերված վերջնական խոտանի արժեքը, խոտանի շտկման ծախսերը, ինչպես նաև երաշխավորված նորոգման ծախսերը:

5.1.29. Ներարտադրական պատճառներով պարապուրդից կորուստները:

5.1.30. Վերաապահովագրության պայմանագրերի համաձայն վճարված կոմիսիոն վարձատրության ծախսերը:

5.1.31. Ոչնչացված գույքի արժեքը, եթե այդ գույքի ոչնչացումը օրենքով սահմանված դեպքերում հանդիսանում է պարտադիր պահանջ, որի չկատարումը հանգեցնում է (կարող է հանգեցնել) հարկատուի գործունեության իրավական սահմանափակմանը (մասնավորապես, լիցենզիայի ուժը կորցրած ճանաչելուն կամ լիցենզիայի գործողության կասեցմանը):

5.1.32. Բարձրագույն ուսումնական հաստատության կողմից՝ այդ հաստատությանը հատկացված վճարովի չափաքանակի շրջանակում սովորող ուսանողական համակազմի 10 տոկոսին փոխհատուցվող ուսման տարեկան վարձի (հիմք ընդունելով ուսանողների առաջադիմությունը):

5.1.33. Այլ ծախսեր:

5.2. Հարկվող շահույթը որոշելիս (բացի սույն հրահանգի 5.1 կետում նշված ծախսերից) համախառն եկամուտը նվազեցվում է նաև.

5.2.1. Հիմնական միջոցների վրա կատարված ծախսերի մասով հետևյալ սկզբունքով.

ա) հիմնական միջոցների վրա կատարված ընթացիկ ծախսերի չափով,

բ) վարձակալի մոտ՝ վարձակալված հիմնական միջոցի վրա կատարված ընթացիկ ծախսերի չափով,

գ) հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերն ավելացվում են տվյալ հիմնական միջոցի նախորդ տարվա վերջի հաշվեկշռային արժեքին (կապիտալացվում են) և ամորտիզացվում են սույն հրահանգի 5.1.4 ենթակետում նշված կարգով,

դ) վարձակալված հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերը վարձակալը ամորտիզացնում է սույն հրահանգի 5.1.4. ենթակետում նշված կարգով:

վարձակալական պայմանագրի լուծման և փաստացի դադարեցման դեպքում չամորտիզացված մնացորդն չի նվազեցվում) վարձակալի համախառն եկամտից:

Շահութահարկի հաշվարկման նպատակով հիմնական միջոցների (այդ թվում՝ վարձակալված) վրա կատարված ծախսերի տարբերակումն ըստ ընթացիկ և կապիտալ ծախսերի կատարվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանված հայտանիշների հիման վրա):

5.2.2. Բնական պաշարների արդյունահանման նախապատրաստական, երկրաբանական հետախուզման և նախագծահետախուզական աշխատանքների ծախսերի չափով՝ սույն հրահանգի 5.1.4 կետի «գ» ենթակետում նշված (ոչ նյութական ակտիվների համար սահմանված ամորտիզացիոն մասհանումների կատարման) կարգով:

5.2.3. Գիտահետազոտական, փորձակոնստրուկտորական աշխատանքների վրա կատարված ծախսերի չափով՝ այդ ծախսերի կատարման տարվա ընթացքում ամբողջովին:

Շահութահարկի հաշվարկման իմաստով գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների դասակարգումը (հասկացությունը) սահմանվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից:

5.2.4. Տվյալ տարվա համախառն եկամտի ստացման հետ կապված, տեխնոլոգիապես անհրաժեշտ, սակայն արտադրանք չտված արտադրության ծախսերը:

5.3. Շահութահարկի հաշվարկման ժամանակ ծախս չեն համարվում՝

5.3.1. հարկատուի սեփական կապիտալի բաշխումը մասնակիցներին՝ շահաբաժինների կամ նման այլ ձևով.

5.3.2. այլ անձի կանոնադրական կապիտալում հարկատուի կատարած ներդրումները (այդ թվում՝ համատեղ գործունեության նպատակով միավորվող միջոցները).

5.3.3. հարկատուի կողմից հետ գնված իր բաժնետոմսերը, բաժնեմասերի կամ փայաբաժինների իրացման և հաշվեկշռային արժեքի բացասական տարբերությունը.

5.3.4. արտաժույթի և արտաժույթով արտահայտված այլ ակտիվների և պարտավորությունների, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով իրականացրած հիմնական միջոցների վերագնահատման բացասական արդյունքը .

5.3.5. ոչ առևտրային կազմակերպությունների անհատույց ստացված ակտիվների (այդ թվում՝ անդամավճարների) գծով ծախսերը կամ դրանց հաշվին կատարված ծախսերը:

5.4. Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամտից չեն նվազեցվում հետևյալ ծախսերը՝

5.4.1. Վնասակար նյութերը շրջակա միջավայր արտանետելու համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանված չափը գերազանցող վճարները:

5.4.2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքից դուրս գովազդի, մարքետինգի կադրերի պատրաստման և վերապատրաստման համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանված չափը գերազանցող ծախսերը:

5.4.3. Հատուկ սննդի, արտահագուստի և այլ հանդերձանքի, աշխատակիցներին՝ օրենսդրությամբ նախատեսված այլ փոխհատուցումների համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանված չափը գերազանցող ծախսերը:

5.4.4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքից դուրս գործուղման ծախսերի, իսկ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում՝ օրապահիկի ծախսերի համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանված չափը գերազանցող ծախսերը:

5.4.5. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանված չափը գերազանցող ներկայացուցչական ծախսերը:

5.4.6. Առողջապահական հիմնարկների, ծերերի և հաշմանդամների տների, մանկական նախադպրոցական հիմնարկների, վերականգնողական ձամբարների, մշակութային, կրթական և մարզական հիմնարկների, ինչպես նաև բնակարանային ֆոնդի օբյեկտների պահպանման համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանված չափը գերազանցող ծախսերը (այդ թվում՝ ամորտիզացիոն մասհանումները և նորոգման ծախսերը):

Եթե Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից սույն հրահանգի 5.4.1-5.4.6 ենթակետերով նախատեսված ծախսերի համար նվազեցման թույլատրելի չափը չի սահմանվել, ապա համախառն եկամուտը նվազեցվում է փաստացի կատարված նմանատիպ ծախսերի ողջ գումարի չափով:

5.4.7. Պետական կամ համայնքների բյուջեներ, ինչպես նաև պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների դիմաց գանձվող տույժերը, տուգանքները և այլ գույքային սանկցիաները, բացի քաղաքացիաիրավական պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու (տնտեսական պայմանագրերի պայմանները խախտելու) համար գանձվողներից:

5.4.8. Անհատույց տրամադրած ակտիվները, ներած պարտավորությունները (հաշվեկշռային արժեքով), բացառությամբ սույն հրահանգի 5.7.5. ենթակետում նախատեսված դեպքերի:

5.4.9. Միավորումներին և արտագերատեսչական կառավարման այլ կառույցներին տրամադրված հատկացումները:

5.4.10. Սպասարկող արտադրությունների և տնտեսությունների պահպանման ծախսերը:

Դրանք այն արտադրություններն ու տնտեսություններն են, որոնց գործունեությունը կապված է տվյալ տնտեսավարող սուբյեկտի ստեղծման նպատակը հանդիսացող արտադրանքի արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման հետ: Մասնավորապես, այդ ծախսերի մեջ ներառվում է տվյալ տնտեսավարող սուբյեկտի հաշվեկշռում գտնվող բնակարանային-կոմունալ տնտեսությունների (բնակելի տների, հանրակացարանների, լվացքատների, բաղնիքների շահագործման և այլն), կենցաղային սպասարկման արհեստանոցների, ճաշարանների և հանրային սննդի այլ օբյեկտների, մանկական նախադպրոցական հիմնարկների (մսուր-մանկապարտեզների) ակունքների, հանգստյան տների, առողջարանների, հանգստյան գոտիների, առողջապահական, մարզական և կուլտուր-լուսավորչական նշանակության այլ օբյեկտների պահպանման և շահագործման ծախսերը:

5.4.11. Հարկատուի կողմից արտադրանքի արտադրության հետ չառնչվող ծառայությունների (քաղաքների կամ այլ բնակավայրերի բարեկարգման աշխատանքներ, գյուղատնտեսական աշխատանքներին օժանդակություն և այլն) մատուցման կամ դրանց դիմաց կատարվող ծախսերը:

5.4.12. Այն եկամուտների (մասնավորապես՝ շահաբաժինների) ստացման հետ կապված ծախսերը, որոնք միաժամանակ նվազեցվում են համախառն եկամտից:

5.5. Փաստաթղթերով չհիմնավորված ծախսերը

5.5.1. Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած չափը չգերազանցող օրապահիկի (ԼԴՀ տարածքում և նրա սահմաններից դուրս) ծախսերի չափով՝ առանց հիմնավորող փաստաթղթերի:

5.6. Կորուստները

5.6.1. Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է գույքի մթերման, պահմանման և իրացման պրոցեսում բացահայտված՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանված կարգով որոշված չափը չգերազանցող՝ փաստաթղթերով հիմնավորված նյութական ռեսուրսների պակասորդից և փչացումից առաջացած բնական կամ փաստացի այլ կորուստների չափով՝ դրանց տեղի ունենալու կամ հայտնաբերվելու տարվա ընթացքում, եթե Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից սահմանված է այդպիսի չափ:

Կորստի նորմաները կիրառվում են միայն փաստացի պակասորդի առկայության դեպքում: Կորստի նորմաների բացակայության դեպքում կորուստը համարվում է գերնորմատիվային պակասորդ:

Գույքի պակասորդները, ինչպես նաև բնական կորստի նորմաներից ավելի փչացումները ձևակերպվում են մեղավոր անձանց վրա:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած կարգով որոշված բնական կամ փաստացի այլ կորուստների չափեր սահմանված չլինելու կամ դրանք գերազանցող կորստի դեպքում համախառն եկամուտը նվազեցվում է այդ կորստի չափով՝

ա) վնաս պատճառողի կողմից կորուստն ամբողջությամբ կամ մաս-մաս կամովին հատուցելու դեպքում՝ կորստի ամբողջական կամ մաս-մաս հատուցման տարում, կամ՝

բ) վնաս պատճառած անձին չպարգելու կամ վնաս պատճառած անձից անհրաժեշտ գումարները վերականգնելու անհնարինության հետևանքով նախաքննության մարմնի կողմից քրեական գործը կասեցնելու կամ կարճելու մասին որոշում ընդունելու դեպքում՝ վերջինիս ընդունման տարում, կամ՝

գ) անձին մեղավոր կամ անմեղ ճանաչելու դատավճիռ կայացնելու դեպքում՝ վերջինիս ուժի մեջ մտնելու տարում:

5.6.2. Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է գույքի պատահական կորուստների չափով՝ դրանց տեղի ունենալու կամ այն հայտնաբերվելու տարվա ընթացքում:

Շահութահարկով հարկման առումով որպես պատահական կորուստ է ընդունվում հարկատուի գույքի (շենքեր, շինություններ, այլ հիմնական միջոցներ, ապրանքանյութական պաշարներ և այլ նյութական արժեքներ) փաստաթղթերով հիմնավորված փաստացի կորուստը (ոչնչացումը, վնասումը կամ որակական հատկանիշների անկումը), որը տեղի է ունենում հրդեհի, ջրհեղեղի, երկրաշարժի կամ այլ տարերային աղետի, նավաբեկման, պատերազմի, մարտական գործողությունների, զինված հարձակման, զանգվածային անկարգությունների, ապստամբության կամ նման այլ արտակարգ իրադարձությունների, ինչպես նաև օրենսդրության փոփոխության (գործունեության տեսակի արգելում, ազգայնացում և այլն) հետևանքով (ներառյալ տարերային աղետների հետևանքների կանխման կամ վերացման հետ կապված ծախսերը):

5.7. Այլ նվազեցումները

Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է՝

5.7.1. Գործարքն անվավեր ճանաչելու հետևանքով գործարքի մյուս կողմին հատուցվող (վերադարձվող) միջոցների գումարի չափով:

5.7.2. Անհուսալի դեբիտորական պարտքերի դուրսգրման համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած կարգով՝ պահուստաֆոնդին կատարվող մասհանումների, իսկ այդ պարտքերի դուրսգրման դեպքում՝ այդ նպատակով ստեղծված պահուստաֆոնդին կատարված մասհանումները գերազանցող գումարի չափով:

5.7.3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանված կարգով դուրս գրված անհուսալի կրեդիտորական պարտքերի մարման գումարների չափով:

5.7.4. Հաշվետու տարում հայտնաբերված՝ նախորդ երեք տարիներում ավել ցույց տրված եկամտի և (կամ) պակաս ցույց տրված նվազեցման չափով:

5.7.5. Ոչ առևտրային կազմակերպություններին, գրադարաններին, թանգարաններին, հանրակրթական դպրոցներին, տուն-գիշերօթիկներին, ծերանոցներին և մանկատներին, ինչպես նաև հոգեբուժական և հակաթոքախտային դիսպանսերներին և հիվանդանոցներին փոխանցված (տրամադրված) միջոցների (ապրանքն և (կամ) դրամական միջոցներ), նրանց մատուցված ծառայությունների արժեքի չափով, բայց ոչ ավելի, քան համախառն եկամտի 0.25 տոկոսի չափով:

5.7.6. Հարկատուի մոտ նախորդ տարիներին առաջացած վնասների չափով: Հարկատուի գործունեությունից վնասը սույն հրահանգում նշված նվազեցումների գերազանցումն է համախառն եկամտի նկատմամբ:

Սույն նվազեցման կիրառման նպատակով հաշվետու և նախորդող տարիներին հարկատուի գործունեությունից վնաս ունենալու դեպքում այն փոխանցվում է վնասի ստացման տարվան հաջորդող 3 տարիներ:

Անկախ սույն դրույթից մինչև 2001թվականի հունվարի 1-ը (այդ թվում նաև՝ 2000 թվականի արդյունքներով) հարկատուի գործունեությունից կուտակված և նախորդ տարիների համախառն եկամտից չնվազեցված վնասները ենթակա են համախառն եկամտից նվազեցման՝ մինչև 2005 թվականի դեկտեմբերի 31-ը:

Սույն նվազեցումը կիրառվում է 1997 թվականի հունվարի 1-ից հետո առաջացած վնասների մասով (1997թ. համար որպես սույն ենթակետում նշված վնաս ընդունվում է հարկատուի հաշվեկշռային վնասը):

5.7.7. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող հարկատուի ստացած շահաբաժինների գումարի չափով:

Շահաբաժին է համարվում այլ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունում մասնակցությունից (բաժնետոմսից) բաժնեմասից, փայաբաժնից ստացված եկամուտը:

5.7.8. Հարկատուի կողմից հետ գնված իր բաժնետոմսերի, բաժնեմասերի կամ փայաբաժինների իրացման և հաշվեկշռային արժեքի դրական տարբերության չափով, եթե տվյալ բաժնետոմսերը բաժնեմասերը կամ փայաբաժինները հետ են գնվել օրենքի պահանջի ուժով (օրենքով պարտադրված), եթե դրանք նախապես եկամուտ էին ճանաչվել:

5.7.9. Իրավաբանական անձի լուծարման դեպքում՝ հարկատուի բաժնետոմսերի (փայերի) դիմաց ստացված մնացորդային գույքի գումարի և բաժնեմասի հաշվեկշռային արժեքի դրական տարբերության չափով:

5.7.10. Հարկատուի կողմից սեփականաշնորհման սերտիֆիկատների ձեռքբերման և սեփականաշնորհմանը մասնակցելու նպատակով ներդրման արժեքների, իսկ ինվեստիցիոն ֆոնդերում ներդրման դեպքերում՝ դրանց անվանական և ձեռքբերման (հաշվեկշռային) արժեքների տարբերության չափով:

5.7.11. Հարկատուի մոտ վարձու աշխատող յուրաքանչյուր հաշմանդամի համար հաշվարկված սույն հրահանգի 5.1.2 ենթակետում թվարկված նվազեցման (աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների) 150 տոկոսի չափով:

Սույն ենթակետում նշված նվազեցումը կատարվում է սույն հրահանգի 5.1.2 ենթակետում նշված նվազեցումից անկախ:

Սույն ենթակետում նշված նվազեցումը իրականացնելիս, որպես վարձու աշխատող հաշմանդամներ, բացի հիմնական գործունեության մեջ ներգրավված հաստիքային աշխատող հաշմանդամներից, ներառվում են նաև համատեղության կարգով այլ ձեռնարկություններից և կազմակերպություններից աշխատանքի ընդունված հաշմանդամները և քաղաքացիա-իրավական բնույթի պայմանագրերի հիման վրա աշխատանքներ կատարող հաշմանդամները:

5.8. Հարկման նպատակով բանկերի և վարկային կազմակերպությունների համախառն եկամտի նվազեցումները

Հարկման նպատակով բանկերի, վարկային կազմակերպությունների համախառն եկամուտը, ի լրումն սույն հրահանգի 5.1, 5.2, 5.6 և 5.7 կետերում նշված ծախսերի, կորուստների և այլ նվազեցումների, նվազեցվում է նաև՝

5.8.1. բանկի և վարկային կազմակերպության տրամադրած վարկերի, ինվեստիցիոն արժեթղթերի, դեբիտորական պարտքերի, հնարավոր կորուստների պահուստներին ուղղված գումարների չափով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած կարգով.

5.8.2. հաճախորդների բանկային ավանդների և ներգրավված փոխառությունների վրա հաշվեգրված տոկոսների չափով.

5.8.3. բանկի և վարկային կազմակերպության և պարտքի հանձնառության (պարտատոմսերի դեպոզիտային և ավանդային հավաստագրերի, ներառյալ՝ սերտիֆիկատները և մուրհակները) գծով հաշվեգրված տոկոսների, այդ թվում՝ պարտքի հանձնառության արժեթղթերի իրացման գների և դրանց անվանական արժեքների բացասական տարբերության (դիսկոնտ) գումարների չափով.

5.8.4. ծառայությունների և թղթակցային հարաբերությունների դիմաց բանկի և վարկային կազմակերպության վճարած միջնորդական վճարների, այդ թվում՝ հաճախորդների հաշվարկային-դրամարկղային սպասարկման, նրանց հաշվարկային, ընթացիկ և այլ հաշիվների վարման ծախսերի, մյուս բանկերին հաշվարկային-դրամարկղային սպասարկման դիմաց վճարի և համանման այլ ծախսերի չափով.

5.8.5. կանխիկ դրամի, չեկերի, վճարային այլ փաստաթղթերի տեղափոխման (ինկասացիա) դիմաց, ինչպես նաև արժեքների փաթեթավորման, այդ թվում՝ կանխիկ դրամի համալրման, բանկին և վարկային կազմակերպությանը կամ նրա հաճախորդներին պատկանող արժեքների տեղափոխման, պահպանման և առաքման ծախսերի չափով.

5.8.6. հաշվարկադրամարկղային և հաշվողական կենտրոնների ծառայությունների վճարումների չափով.

5.8.7. բանկի և վարկային կազմակերպության գործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ վճարային միջոցներ (պլաստիկային քարտեր, ճանապարհային չեկեր և այլն) պատրաստելու, թողարկելու, ի պահ ընդունելու և ներդնելու հետ կապված ծախսերի չափով.

5.8.8. բաժնետոմսեր պարտատոմսեր, ավանդային հավաստագրեր (սերտիֆիկատներ), պարտքի այլ հանձնառություններ և ֆինանսական շուկայում շրջանառության մեջ գտնվող այլ արժեթղթեր թողարկելու հետ կապված ծախսերի (թողարկման ազդագրերի նախապատրաստման, արժեթղթերի ձևաթղթերի ձեռքբերման, տպագրման ծախսեր, արժեթղթերի տարածման դիմաց միջնորդական վարձատրությունների վճարումներ և այլն) չափով.

5.8.9. կեղծ թղթադրամների և վճարային փաստաթղթերի պատճառով բանկի և վարկային կազմակերպության կրած կորուստների չափով:

5.9. Հարկման նպատակով ապահովագրական ընկերությունների համախառն եկամտի նվազեցումները

Հարկման նպատակով ապահովագրական ընկերությունների համախառն եկամուտը, ի լրումն սույն հրահանգի 5.1, 5.2, 5.6 և 5.7 կետերում նշված նվազեցումների, նվազեցվում է նաև՝

5.9.1. վերապահովագրության պայմանագրերի համաձայն վերապահովագրող հանդիսացող հարկատուի կողմից ապահովագրողներին վճարված ապահովագրական հատուցումների գումարների չափով, ինչպես նաև ապահովագրության պայմանագրերի համաձայն ապահովագրող հանդիսացող հարկատուների կողմից ապահովագրողներին վճարած ապահովագրական հատուցումների գումարների չափով.

5.9.2. վերապահովագրության պայմանագրերի համաձայն վերապահովագրողներին վճարած ապահովագրավճարների չափով.

5.9.3. կանխարգելիչ միջոցառումների պահուստների մասհանումների, ապահովագրողներին կամ ապահովագրողներին պատկանող արժեքների տեղափոխման, պահպանման կամ առաքման ծախսերի չափով.

5.9.4. ապահովագրական պահուստների մասհանումների չափով.

5.9.5. ապահովագրական գործակալներին և բրոքերներին վճարված (հաշվարկված) կոմիսիոն վարձատրության չափով.

5.9.6. հաշվարկադրամարկղային և հաշվողական կենտրոնների ծառայությունների վճարումների չափով.

5.9.7. ապահովագրական ընկերությունների գործունեության ապահովման համար անհրաժեշտ վճարային միջոցների (ճանապարհային չեկեր, պլաստիկ քարտեր և այլն) պատրաստման, թողարկման, ի պահ ընդունման և ներդրման հետ կապված ծախսերի չափով.

5.10. Համախառն եկամտից ծախսերի գծով նվազեցումների իրականացումը

5.10.1. Արտադրանքի արտադրության և ծառայությունների մատուցման հետ անմիջականորեն կապված ծախսերի (նյութական, աշխատանքի վարձատրության, սոցիալական ապահովագրության, արտադրական նշանակության հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումներ (այդ թվում՝ երկարաժամկետ վարձակալված հիմնական միջոցների գծով), նորոգում և այլն) չափով համախառն եկամտից նվազեցումները կատարվում են տվյալ արտադրանքի և ծառայությունների իրացմանը համապատասխան:

5.10.2. Առևտրական գործունեություն իրականացնող հարկատուների մոտ ապրանքների ձեռքբերման արժեքի չափով համախառն եկամտից նվազեցումները կատարվում են այդ ապրանքների իրացմանը համապատասխան:

5.10.3. Սույն հրահանգի 5.10.1 և 5.10.2 ենթակետերում չնշված ակտիվների (հիմնական միջոցների և այլ ակտիվների) մնացորդային արժեքի չափով համախառն եկամտից նվազեցումները կատարվում են այդ ակտիվների իրացմանը համապատասխան:

5.10.4. Հարկատուի գործունեության հետ կապված վարչական ծախսերի (կառավարման ապարատի աշխատավարձ, սոցիալական ապահովագրություն, գործուղումներ, նյութական և տրանսպորտային սպասարկում, կառավարման տեխնիկական միջոցների և ոչ արտադրական (ընդհանուր տնտեսական) նշանակության հիմնական միջոցների նորոգում, պահպանում և շահագործում, ներկայացուցչական, դատական, աուդիտորական, խորհրդատվական և տեղեկատվական ծառայություններ, կադրերի պատրաստում և վերապատրաստում, աշխատուժի հավաքագրման հետ կապված ծախսեր, գրասենյակային, փոստային, հեռախոսային, հեռագրային և

նմանատիպ այլ ծառայությունների հետ կապված ծախսեր), արտադրանքի և ծառայությունների իրացման հետ կապված ծախսերի (փաթեթավորում, պահպանում, բեռնում, տեղափոխում, ուղեկցում, գովազդ, մարքեթինգ և այլն), ոչ արտադրական բնույթի այլ ծախսերի (գյուտարարական և ռացիոնալիզատորական, գիտահետազոտական, նախագծային և փորձակոնստրուկտորական աշխատանքների և այլն), գործառնական այլ ծախսերի (կոնսերվացված արտադրական հզորությունների և օբյեկտների պահպանման, կարճաժամկետ արժեթղթերի իրացման, հումքի, նյութերի իրացման հետ կապված ծախսեր և այլն) և ինվեստիցիոն ծախսերի (երկարաժամկետ ակտիվների իրացման և այլ օտարման, և այլն) չափով համախառն եկամտից նվազեցումները կատարվում են այն տարվա ընթացքում, որին դրանք վերաբերում են (որի ընթացքում դրանք կատարվել են):

5.10.5. Հարկատուի ֆինանսական գործունեության հետ կապված ծախսերի (վարկերի, դրամական և այլ գույքային փոխառությունների հաշվարկված տոկոսներ, վարկերի, դրամական և այլ գույքային փոխառությունների ստացման հետ կապված ծախսեր, գույքի երկարաժամկետ (ֆինանսական) վարձակալության դիմաց տոկոսներ և վարձակալության հետ կապված այլ ծախսեր, արժեթղթերի թողարկման և տարածման հետ կապված ծախսեր շահաբաժինների վճարման հետ կապված կազմակերպչական ծախսեր (բաժնետերերի ժողովների կազմակերպում, փաստաթղթերի ձևակերպում) և այլն չափով համախառն եկամտից նվազեցումները կատարվում են այն տարվա ընթացքում, որին դրանք վերաբերում են (որի ընթացքում դրանք կատարվել են):

5.10.6. Նախորդ տարիներում ավել ցույց տրված եկամտի (պակաս ցույց տրված նվազեցումների) չափով համախառն եկամտից նվազեցումները կատարվում են դրանց հայտնաբերման տարվա ընթացքում:

6. Շահութահարկի դրույքաչափերը

6.1. Շահութահարկի գումարը հարկվող շահույթի նկատմամբ հաշվարկվում է 5 տոկոս դրույքաչափով:

6.2. Բանկերի, վարկային կազմակերպությունների ստացած եկամուտների դիմաց շահութահարկը հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով:

6.3. Առանձին վճարողների, նրանց խմբերի, գործունեության տեսակների համար օրենքով կարող են սահմանվել շահութահարկին փոխարինող հաստատագրված վճարներ և (կամ) առևտրի հարկ:

6.4. Շահութահարկի տարբեր դրույքաչափերով (այդ թվում՝ շահութահարկի հաստատագրված վճարներով) հարկվող գործունեության տեսակներ իրականացնող հարկատուները շահութահարկը վճարում են գործունեության յուրաքանչյուր տեսակի համար սահմանված առանձին դրույքաչափերով: Այդ նպատակով հարկատուն վարում է եկամուտների և նվազեցումների առանձնացված հաշվառում՝ ըստ գործունեության առանձին տեսակների:

Շահութահարկի տարբեր դրույքաչափերով հարկվող գործունեության տեսակներ իրականացնող հարկատուները ըստ գործունեության առանձին տեսակների հարկվող շահույթների որոշման ժամանակ ընդհանուր արտադրական և ընդհանուր տնտեսական ծախսերը (օրինակ, կառավարման ապարատի աշխատավարձ, սոցիալական ապահովագրության վճարներ, կառավարման տեխնիկական միջոցների և ոչ արտադրական (ընդհանուր տնտեսական) նշանակության հիմնական միջոցների նորագում, պահպանում և շահագործում, խորհրդատվական և տեղեկատվական ծառայություններ, գրասենյակային, փոստային, հեռախոսային, հեռագրային և նմանատիպ այլ ծախսեր), որոնք ըստ գործունեության առանձին տեսակների հնարավոր չէ առանձնացնել, բաշխում են ելնելով ընդհանուր համախառն եկամտի մեջ գործունեության առանձին տեսակների գծով ստացված համախառն եկամուտների տեսակարար կշիռներից:

Ըստ գործունեության առանձին տեսակների համախառն եկամուտների և նվազեցումների չվարելու դեպքում դրանց մեծությունը որոշվում է (ղեկավարվելով «Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 22 հոդվածով) հիմք ընդունելով հարկատուի ակտիվները, գույքագրման և չափագրման տվյալները, օրենքով սահմանված կարգով երրորդ անձանցից ստացված տեղեկությունները, համանման պայմաններում գործող այլ տնտեսավարող սուբյեկտների միջև կիրառվող գների մակարդակը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից սահմանվող այլ նորմեր:

7. Շահութահարկի արտոնությունները

7.1. Շահութահարկի վճարումից ազատվում են.

7.1.1. Գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղված հարկատուները իրենց կողմից գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացված եկամտի մասով, ինչպես նաև հիմնական միջոցների և այլ ակտիվների իրացումից ստացված և այլ եկամուտների մասով, եթե վերջիններիս տեսակարար կշիռը համախառն եկամտի մեջ չի գերազանցում տասը տոկոսը:

Սույն հրահանգի իմաստով՝ գյուղատնտեսական արտադրանք է համարվում կենդանիների կամ բույսերի կենսաբանական վերափոխման միջոցով վերջնական կամ միջանկյալ սպառման համար ստացվող սույն հրահանգին կից հավելված 1-ում թվարկված արտադրանքը:

Գյուղատնտեսական արտադրանքի գծով ստացված եկամտի ճշգրիտ հաշվարկման անհնարինության դեպքում այն հաշվարկվում է հիմնվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված կադաստրային գույտ եկամտի տվյալների վրա:

Սույն ենթակետում նշված հարկատուների գործունեության այլ տեսակներից ստացված շահույթը ենթակա է շահութահարկով հարկման սույն հրահանգով սահմանված ընդհանուր կարգով:

7.2. Ռեզիդենտի շահութահարկի գծով ժամկետային արտոնությունները

7.2.1. Եթե ռեզիդենտի (բացառությամբ բանկերի և վարկային կազմակերպությունների) կանոնադրական կապիտալում ներդրողների փաստացի կատարած ներդրման ընդհանուր արժեքը 2000 թվականի հունվարի 1-ից հետո կազմում է առնվազն 25 մլն դրամ, ապա տվյալ ռեզիդենտի շահութահարկի գումարը նվազեցվում է՝

<i>Ռեզիդենտի կանոնադրական կապիտալում փաստացի կատարված ներդրման չափաքանակը</i>	<i>Շահութահարկի նվազեցման չափը՝ ըստ տարիների</i>	
	<i>100%-ով</i>	<i>50%-ով</i>
<i>25-ից 50 մլն դրամ</i>	<i>առաջին 1 տարի</i>	<i>հետագա 2 տարի</i>
<i>50-ից 100 մլն դրամ</i>	<i>առաջին 1 տարի</i>	<i>հետագա 3 տարի</i>
<i>100-ից 200 մլն դրամ</i>	<i>առաջին 2 տարի</i>	<i>հետագա 3 տարի</i>
<i>200-ից 300 մլն դրամ</i>	<i>առաջին 3 տարի</i>	<i>հետագա 3 տարի</i>
<i>300 մլն դրամ և ավելի</i>	<i>առաջին 4 տարի</i>	<i>հետագա 3 տարի</i>

Սույն ենթակետում նշված արտոնության ժամկետում հարկատուի լուծարման դեպքում շահութահարկի գումարն այդ արտոնության ժամանակաշրջանի համար հաշվարկվում է լրիվ չափով գործունեության ողջ ժամանակաշրջանի համար:

Սույն ենթակետի կիրառման նպատակով՝

ա) ներդրում է համարվում հարկատուի կանոնադրական կապիտալի ձևավորմանը և համլրմանն ուղղված ակտիվների ներհոսքը և (կամ) պարտավորությունների նվազումը, ինչպես նաև պետական գույքի սեփականաշնորհումը (մասնավորեցումը):

բ) գույքային ներդրումները ենթակա են պետական գրանցման և (կամ) նոտարական վավերացման և (կամ) անկախ փորձագիտական եզրակացության՝ օրենքով սահմանված կարգով:

Սույն ենթակետով նախատեսված արտոնությունը չի տարածվում ոչ նյութական ակտիվներով ներդրումների վրա:

7.2.2. Մինչև 1998 թվականի հունվարի 1-ը օտարերկրյա ներդրումներով ձեռնարկություններին և բանկերին շահութահարկի գծով օրենքով կամ այլ իրավական ակտով տրված արտոնություններ լինելու դեպքում մինչև տվյալ օրենքով կամ այլ իրավական ակտով դրանց համար սահմանված ժամկետի ավարտը հարկատուն, իր հայեցողությամբ, հարկային մարմնին ներկայացվող հայտարարության հիման վրա, կարող է օգտվել սույն հրահանգի 7.2.1. ենթակետում նշված արտոնությունից:

7.3. Շահութահարկի վճարման ժամկետի հետաձգումը

7.3.1. Մինչև 2006 թվականի հունվարի 1-ն իրականացված՝ խմելու և ոռոգման ջրի մատակարարման, կեղտաջրերի հեռացման և մաքրման գծով բնակչությանը մատուցվող ծառայությունների (գործարքների), ինչպես նաև “Գնումների մասին” ԼՂՀ օրենքին համապատասխան պետական գնումների շրջանակներում ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման գծով շահութահարկի վճարման ժամկետը հետաձգվում է մինչև դրանց իրացման դիմաց վճարման հաշվետու ժամանակաշրջանը:

7.3.2. Սույն հրահանգի 7.3.1 ենթակետում նշված գործարքների, գործառնությունների և ծառայությունների գծով հարկային հաշվառումը տարվում է սույն հրահանգի 8 կետում նշված ընդհանուր կարգով:

7.3.3. Շահութահարկի վճարման ընդհանուր կարգով և շահութահարկի վճարման ժամկետի հետաձգմամբ միաժամանակ աշխատող հարկատուների նկատմամբ կիրառվում են սույն հրահանգի 6.4 կետի դրույթները:

7.4. Հարկային արտոնությունների սահմանումը

Շահութահարկից ազատելու և ԼՂՀ հարկային օրենսդրությամբ նախատեսված այլ արտոնությունները սահմանվում են օրենքով:

8. Հարկային հաշվառումը

8.1. Հաշվեգրման եղանակով հաշվառումը

8.1.1. Հարկվող օբյեկտը որոշելիս եկամուտների և ծախսերի հաշվառումն իրականացվում է հաշվեգրման եղանակով:

8.1.2. Հաշվեգրման եղանակով հաշվառման դեպքում հարկատու էկամուտների և ծախսերի հաշվառումն իրականացնում է, համապատասխանաբար ելնելով իր կողմից այդ եկամուտների ստացման իրավունքը ձեռք բերելու կամ դրա համար այդ ծախսերը ձանաչելու պահից՝ անկախ եկամտի փաստացի ստացման կամ վճարումների իրականացման ժամկետից:

8.2. Հաշվեգրման եղանակով եկամուտների հաշվառման առանձնահատկությունները

8.2.1. Եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված, եթե համապատասխան գումարը ենթակա է անվերապահ վճարման (հատուցման) հարկատուին և (կամ) վերջինս կատարել է գործարքից կամ պայմանագրից բխող պարտավորությունները, որոնք ձանաչվել են գործարքի կամ պայմանագրի մյուս մասնակցի կողմից, եթե նույնիսկ այդ իրավունքի բավարարման պահը հետաձգվել է, կամ վճարումներն իրականացվում են մաս- մաս:

8.2.2. Այրանքների իրացումից հատույթի ձանաչման պահը մատակարարից (վաճառողից) գնորդին դրանց սեփականության իրավունքի փոխանցման պահն է, եթե ԼԴՀ օրենսդրությամբ այլ բան չի նախատեսվում:

8.2.3. Հարկատուի կողմից ծառայություններ մատուցելու դեպքում եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված գործարքից բխող ծառայությունների մատուցումն ավարտելու (այդ թվում նաև՝ ըստ փուլերի) պահից:

8.2.4. Տոկոսների տեսքով եկամուտների ստացման իրավունքի ձանաչման պահի իմաստով անհրաժեշտ է հաշվի առնել, որ տոկոսների տեսքով եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված պարտքի (փոխատվության) պայմանագրով նախատեսված պարտքի (փոխատվության) ժամկետը լրանալու պահից:

Եթե պարտքի (փոխատվության) պայմանագրով նախատեսված պարտքի (փոխատվության) ժամկետը ներառում է մի քանի հաշվետու ժամանակաշրջան, ապա ըստ հաշվետու ժամանակաշրջանների եկամուտը բաշխվում է դրա հաշվեգրմանը համապատասխան:

8.2.5. Գույքը վարձակալության տալու դիմաց եկամուտների ստացման իրավունքի ձանաչման պահի իմաստով անհրաժեշտ է հաշվի առնել, որ վարձավճարի տեսքով եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված վարձակալական պայմանագրով նախատեսված վարձակալության ժամկետը լրանալու պահից:

Եթե վարձակալական պայմանագրով նախատեսված վարձակալության ժամկետը ներառում է մի քանի հաշվետու ժամանակաշրջան, ապա ըստ հաշվետու ժամանակաշրջանների եկամուտը բաշխվում է դրա հաշվեգրմանը համապատասխան:

8.2.6. Շահաբաժինների տեսքով եկամուտների ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված բաժնետերերի ժողովի կողմից բաշխման մասին որոշման ընդունման օրը (բայց ոչ ուշ շահաբաժինների բաշխման օրենսդրությամբ սահմանված ժամկետները, եթե օրենսդրությամբ սահմանված են շահաբաժինների բաշխման ժամկետներ և չափեր):

9. Շահութահարկի հաշվարկման կարգը և վճարման ժամկետները

9.1. Շահութահարկի գումարի որոշումը

9.1.1. Հարկատուները շահութահարկի գումարները որոշում են ինքնուրույնաբար, տարեկան արդյունքներով՝ սույն հրահանգում սահմանված կարգով հաշվարկված հարկվող շահույթի մեծությունից ելնելով և սույն հրահանգում նշված դրույքաչափերով:

9.1.2. Հարկատուի կողմից “Հարկերի մասին” ԼԴՀ օրենքի 22 հոդվածում նշված խախտումները թույլ տալու դեպքում հարկային տեսչության մարմինը, ԼԴՀ կառավարության կողմից սահմանված կարգով, ինքն է հաշվարկում հարկատուի շահութահարկի մեծությունը՝ հիմք ընդունելով հարկատուի ակտիվներում, իրացման շրջանառության ծավալների մեջ, արտադրության և շրջանառության ծախսերում, գույքագրման և չափագրման տվյալների մեջ կատարված տեղաշարժերը, ինչպես նաև օրենքով սահմանված երրորդ անձանցից ստացված տեղեկությունները, համանման պայմաններում գործող տնտեսավարող այլ սուբյեկտների միջև կիրառված գների մակարդակը, ԼԴՀ կառավարության կողմից սահմանած այլ նորմեր:

9.1.3. Առանձին հարկատուների թույլատրվում է շահութահարկի հաշվարկումը, հաշվարկների ներկայացումը և վճարումը կատարել կենտրոնացված կարգով: Նման հարկատուների ցանկը սահմանում է ԼԴՀ կառավարությունը:

9.2. Շահութահարկի հաշվարկների և հաշվապահական (ֆինանսական) հաշվետվությունների ներկայացումը հարկային մարմիններին:

9.2.1. Շահութահարկ վճարողները յուրաքանչյուր տարվա արդյունքներով իրենց հաշվառման վայրի հարկային տեսչության մարմիններին ներկայացնում են հրահանգին կից հավելված 2-ում բերված ձևով շահութահարկի հաշվարկներ, ինչպես նաև ԼԴՀ օրենսդրությամբ սահմանված ձևերով հաշվապահական (ֆինանսական) հաշվետվություններ՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 15-ը: Հաշվապահական հաշվառման նոր համակարգով հաշվառումը վարող շահութահարկ վճարողները շահութահարկի հաշվարկ ներկայացնում են սույն հրահանգին կից հավելված 3-ում բերված ձևով:

Շահութահարկի հաշվարկը չեն լրացնում (չեն ներկայացնում)։

ա) գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ (հիմնականում) զբաղված հարկատուները, եթե հիմնական միջոցների և այլ ակտիվների իրացումից ստացված և այլ եկամուտների տեսակարար կշիռը համախառն եկամտի մեջ չի գերազանցում տասը տոկոսը։

բ) ոչ առևտրային կազմակերպությունները, եթե ստացված միջոցները բացառապես սույն հրահանգի 4.2.7. ենթակետի համաձայն եկամուտ չեն համարվում։

գ) միայն հաստատագրված վճարով հարկվող գործունեությունը իրականացնող և (կամ) միայն առևտրի հարկով հարկվող գործունեությամբ զբաղվող հարկատուները։

9.2.2. Շահութահարկի հաշվարկների և հաշվապահական (ֆինանսական) հաշվետվությունների ներկայացման ժամկետի մեջ ներառվում է նաև սույն հրահանգի 9.2.1. կետում նշված օրը (ապրիլի 15-ը), իսկ եթե դա համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա ներկայացնելու ժամկետը տեղափոխվում է այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը։

9.2.3. Նախորդ հաշվետու տարիների համար ներկայացված շահութահարկի հաշվարկներում հարկատուի կողմից սխալներ հայտնաբերելու դեպքում (որոնք չեն բխում հաշվապահական հաշվառման մեջ տրվող գրանցումներից) հարկատուն կարող է հարկային տեսչության մարմիններին ներկայացնել ճշտված հաշվարկ, որի հիման վրա կատարվում է այդ ժամանակաշրջանների համար հարկային պարտավորությունների վերահաշվարկ։

9.3 Շահութահարկի կանխավճարները։

9.3.1. Հաշվետու տարվա ընթացքում հարկատուն պարտավոր է կատարել շահութահարկի կանխավճարներ։ Ընթացիկ տարում շահութահարկի նվազեցման (այդ թվում՝ ժամկետային) արտոնությունից օգտվող հարկատուների համար սույն հրահանգով սահմանված կարգով որոշվող կանխավճարների մեծությունը նվազեցվում է տվյալ տարվա շահութահարկի նվազեցման չափով (տոկոսով)՝ արտոնությունից օգտվելու ժամանակաշրջանում։ Շահութահարկի վճարման ժամկետի հետաձգման արտոնությունից օգտվող հարկատուների համար հաշվարկված և հետաձգված շահութահարկի գումարներին համապատասխան կանխավճարների կատարումը հետաձգվում է մինչև նախորդ տարիներին վերաբերվող գումարների ստացման հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ժամանակաշրջանը։

9.3.2. Կանխավճարների մուծումները կատարվում են յուրաքանչյուր ամիս, նախորդ տարվա շահութահարկի փաստացի գումարի մեկ տասնվեցերորդի չափով՝ տվյալ ամսվա 25-ից (իսկ եթե դա համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվանից) ոչ ուշ։ Բացառությամբ սույն հրահանգի 9.3.5 և 9.3.6 ենթակետերով նախատեսված դեպքերի ընթացիկ տարվա կանխավճարների հաշվարկման համար հիմք է հանդիսանում նախորդ տարվա հարկվող շահույթի նկատմամբ կիրառվող դրույքաչափով հաշվարկված շահութահարկի գումարի և նախորդ տարում օտարերկրյա պետություններում ստացված եկամտից վճարված շահութահարկի հաշվանցվող գումարների դրական տարբերությունը, ինչպես նաև նախորդ տարվա առևտրի հարկի և (կամ) հաստատագրված վճարի մեջ շահութահարկին բաժին ընկնող գումարները՝ հաշվի առնելով շահութահարկի վճարման ժամկետի հետաձգման արտոնությունից օգտվող հարկատուների համար սույն հրահանգի 9.3.1 ենթակետով սահմանված առանձնահատկությունները։

9.3.3. Շահութահարկի կանխավճարներ չեն կատարում։

ա) նոր հիմնադրված հարկատուն (բացի վերակազմակերպման դեպքերից)՝ մինչև պետական գրանցման տարվա փաստացի շահութահարկի հաշվարկի ներկայացման օրը, բայց ոչ ուշ, քան այդ (պետական գրանցման) տարվանը հաջորդող տարվա ապրիլի 25-ը։

բ) այն հարկատուն, որը նախորդ տարում հարկվող շահույթ չի ունեցել կամ որի նախորդ տարվա շահութահարկի գումարը չի գերազանցել 100.0 հազ. դրամը (մինչև 2003թ. հունվարի 1-ը եթե նախորդ տարվա շահութահարկի գումարը չի գերազանցել 500 հազ. դրամը), կարող է շահութահարկի հաշվարկը ներկայացնելուց հետո շահութահարկի կանխավճարներ չկատարել։

գ) այն հարկատուն, որը ընթացիկ տարում ազատվում է շահութահարկի վճարումից (օգտվում է 100 տոկոս ժամկետային արտոնությունից)՝ հարկային արտոնության իր իրավունքը հաստատող փաստաթղթերը հարկային մարմնին ներկայացնելուց հետո։

դ) այն հարկատուն, որը ընթացիկ տարում եկամուտներ չի նախատեսում (գործնեություն չի իրականացնելու)՝ այդ մասին նախօրոք (նախորդ տարվա փաստացի շահութահարկի փաստացի հաշվարկների օրենքով սահմանված ներկայացման ժամկետից ոչ ուշ) հարկային մարմնին գրավոր հայտնելուց հետո։

9.3.4. Ամսական կանխավճարների մեծությունը հաշվարկելիս հաշվի են առնվում հետևյալ առանձնահատկությունները։

ա) ընթացիկ տարում ամսական կանխավճարների մեծությունը հաշվարկելիս հաշվի են առնվում նաև նախորդ տարում ստուգմամբ հայտնաբերված շահութահարկի գումարները (անկախ այն հանգամանքից, թե որ տարիներին է վերաբերվում հայտնաբերված լրացուցիչ գումարները)։

Օրինակ 2. Կազմակերպության 2001թ. գործունեության արդյունքներով հաշվարկված շահութահարկի գումարը կազմել է 3200,0 հազ. դրամ, որը ներառում է 2001թ. սեպտեմբերին հարկային մարմինների կողմից կազմակերպությունում կատարված ստուգմամբ լրացուցիչ հայտնաբերված գումարները, որոնք վերաբերվում են 1999թ. և 2000թ. կազմակերպության

գործունեությանը (ընդհանուր գումարով՝ 1300,0 հազ. դրամ): 2001թ. տարեկան շահութահարկի հաշվարկը կազմակերպության կողմից հարկային մարմին ներկայացվել է 22.01.2002թ.-ին:

2002թ. ամսական կանխավճարի գումարը կկազմի 200.0 հազ. դրամ (3200.0:16), որի առաջին վճարումը պետք է կատարվի 2002թ. հունվարի 25-ից ոչ ուշ.

բ) ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում շահութահարկի վճարման ժամկետի հետաձգման արտոնությունից օգտվող հարկատուները, որոնք հաշվետու տարում ստացել են նախորդ տարիներին վերաբերվող գումարներ, վերջիններիս գծով հաշվարկված և հետաձգված հարկի գումարները վճարում են մինչև հաշվետու տարվան հաջորդող ապրիլի 25-ը (ներառյալ) և այդ գումարները հաշվի են առնվում հաշվետու տարվան հաջորդող տարվա կանխավճարները հաշվարկելիս՝ հրահանգի 9.3.2. ենթակետում նշված չափերով (այդ դեպքում հարկատուն գումարների ստացման տարվա տարեկան շահութահարկի հաշվարկի հետ միասին հարկային մարմնին է ներկայացնում նաև համապատասխան տեղեկանք՝ հաշվարկի 0800 տողում, իսկ հաշվապահական հաշվառման նոր համակարգին անցած հարկատուները՝ հաշվարկի 0900 տողում արտացոլված գումարի կառուցվածքի մասին):

Օրինակ 3. Կազմակերպության 2001թ. գործունեության արդյունքներով հաշվարկված շահութահարկի գումարը կազմել է 2000.0 հազ. դրամ. որից 800.0 հազ. դրամը հաշվարկվել է պետական պատվերի շրջանակներում իրականացվող գործունեությունից: 2001թ. տարեկան շահութահարկի հաշվարկը կազմակերպության կողմից հարկային մարմին ներկայացվել է 20.01.2002թ.-ին: Պետական պատվերի գծով գումարները կազմակերպությունը ստացել է 2002թ. սեպտեմբերի 21-ին: Կազմակերպության 2002թ. գործունեության արդյունքներով հաշվարկված շահութահարկը կազմել է 900.0 հազ. դրամ:

2002թ. ամսական կանխավճարի գումարը կկազմի 75.0 հազ. դրամ ((2000.0-800.0):16). որի առաջին վճարումը պետք է կատարվի 2002թ. հունվարի 25-ից ոչ ուշ: 2003թ. ամսական կանխավճարի գումարը կկազմի 106.25 հազ. դրամ ((900.0+800):16): Մինչև 2003թ. ապրիլի 25-ը (ներառյալ) վճարվում է նաև 2001թ. պետական պատվերի գծով հետաձգված հարկի գումարը (800.0 հազ. դրամ):

գ) այն հարկատուն, որը նախորդ տարվա որևէ ժամանակահատվածում հանդիսացել է հաստատագրված վճար վճարող, իսկ ընթացիկ տարում շահութահարկը հաշվարկում և վճարում է ընդհանուր կարգով, ընթացիկ տարում ամսական կանխավճարների գումարները հաշվարկում է հաշվի առնելով նախորդ տարվա համար հաշվարկված հաստատագրված վճարի մեջ շահութահարկին բաժին ընկնող (իսկ օրենքով նախատեսած սահմանային չափերը գերազանցված լինելու դեպքում ընդհանուր սահմանած կարգով հաշվարկված շահութահարկի) գումարները:

Օրինակ 4. Կազմակերպությունը 2001թ. գործունեության արդյունքներով հաշվարկված շահութահարկի գումար չի ունեցել, իսկ հաստատագրված վճարի շահութահարկին բաժին ընկնող մասը 40% կազմում է 800.0 հազ. դրամ: 2002թ. համար կազմակերպությունը շահութահարկը հաշվարկում և վճարում է ընդհանուր սահմանած կարգով: 2001թ. տարեկան շահութահարկի հաշվարկը կազմակերպության կողմից հարկային մարմին ներկայացվել է 22.01.2002թ.-ին:

2002թ. ամսական կանխավճարի գումարը կկազմի 50.0 հազ. դրամ (800.0:16), որի առաջին վճարումը պետք է կատարվի 2002թ. հունվարի 25-ից ոչ ուշ.

դ) այն հարկատուն, որը նախորդ տարվա որևէ ժամանակահատվածում հանդիսացել է առևտրի հարկ վճարող, իսկ ընթացիկ տարում շահութահարկը հաշվարկում և վճարում է ընդհանուր սահմանված կարգով, ընթացիկ տարում ամսական կանխավճարների գումարները հաշվարկում է հաշվի առնելով նախորդ տարվա համար հաշվարկված առևտրի հարկի շահութահարկին բաժին ընկնող (իսկ օրենքով նախատեսված առևտրի հարկ վճարող դադարելու դեպքում՝ ընդհանուր սահմանած կարգով հաշվարկված շահութահարկի) գումարները:

Օրինակ 5. Կազմակերպության 2002թ. գործունեության արդյունքներով հաշվարկված շահութահարկի գումարը կազմել է 600.0 հազ. դրամ, իսկ առևտրի հարկին բաժին ընկնող գործունեության մասով առևտրի հարկի գումարը կազմել է 2000.0 հազ. դրամ, այդ թվում 40%-ը կազմում է 800.0 հազ. դրամ: 2003թ. համար կազմակերպությունը շահութահարկը հաշվարկում և վճարում է ընդհանուր սահմանած կարգով: 2002թ. տարեկան շահութահարկի հաշվարկը կազմակերպության կողմից հարկային մարմին ներկայացվել է 22.01.2003թ.-ին: 2003թ. ամսական կանխավճարի գումարը կկազմի 87.5 հազ. դրամ ((600.0+800.0):16), որի առաջին վճարումը պետք է կատարվի 2003թ. հունվարի 25-ից ոչ ուշ.

ե) ընթացիկ տարում.

-իրավաբանական անձանց միաձուլման դեպքում կանխավճարները հաշվարկում է նոր առաջացած իրավաբանական անձը՝ հաշվի առնելով միաձուլված կազմակերպությունների համար հաշվարկված կանխավճարային գումարները:

Օրինակ 6 “Ա”, “Բ”, “Գ”, “Դ”, կազմակերպությունները 2003թ. սեպտեմբերի 15-ին միաձուլվել են, որի հետևանքով առաջացել է “Ե” կազմակերպությունը: “Ա” կազմակերպության 2002թ. գործունեության արդյունքներով հաշվարկված շահութահարկի գումարը կազմել է 600.0 հազ. դրամ “Բ” կազմակերպության՝ 400.0 հազ. դրամ և “Դ” կազմակերպությանը՝ 1200.0 հազ. դրամ, իսկ “Գ” կազմակերպությունը 2002թ. տարեկան արդյունքներով ունեցել է հարկային վնաս:

Միաձուլումից հետո “Ե” կազմակերպության ամսական կանխավճարի գումարը կկազմի 137.5 հազ. դրամ ((600.0+400+1200.0):16), որի առաջին վճարումը պետք է կատարվի 2003թ. սեպտեմբերի 25-ից ոչ ուշ:

- իրավաբանական անձի՝ այլ իրավաբանական անձի միանալու դեպքում՝ վերջինս կանխավճարները հաշվարկում է հաշվի առնելով միացած կազմակերպությունների համար հաշվարկված կանխավճարային գումարները:

Օրինակ 7. “Ա”, “Բ” և “Դ” կազմակերպությունները 2003թ. սեպտեմբերի 15-ին միացվել են “Գ” կազմակերպությանը: “Ա” կազմակերպության 2002թ. տարեկան արդյունքներով հաշվարկված շահութահարկի գումարը կազմել է 600.0 հազ. դրամ և “Բ” կազմակերպությանը՝ 80.0 հազ. դրամ և “Դ” կազմակերպությանը՝ 1200.0 հազ. դրամ, իսկ “Գ” կազմակերպությանը 2002թ. տարեկան արդյունքներով ունեցել է հարկային վնաս:

Միացումից հետո “Գ” կազմակերպության ամսական կանխավճարի գումարը կկազմի 112.50 հազ. դրամ ((600.0+1200.0):16), որի առաջին վճարումը պետք է կատարվի 2002թ. սեպտեմբերի 25-ից ոչ ուշ:

- իրավաբանական անձի բաժանման դեպքում՝ կանխավճարները հաշվարկում են նոր առաջացած իրավաբանական անձինք՝ հավասարաչափ, եթե բաժանիչ հաշվեկշռով այլ բան նախատեսված չէ:

Օրինակ 8. “Գ” կազմակերպությունը 2003թ. սեպտեմբերի 15-ին բաժանվել է “Ա”, “Բ” և “Դ” կազմակերպությունների՝ բաժանիչ հաշվեկշռի համապատասխան (բաժանիչ հաշվեկշռով կանխավճարների գծով հարկային պարտավորությունների վերաբաշխում նախատեսված չէ): “Գ” կազմակերպության 2002թ. գործունեության արդյունքներով հաշվարկված շահութահարկի գումարը կազմել է 1200.0 հազ. դրամ:

Բաժանվելուց հետո “Ա”, “Բ” և “Դ” կազմակերպությունների ամսական կանխավճարների գումարը կկազմի 25.0 հազ. դրամ (1200.0:16:3), որի առաջին վճարումը պետք է կատարվի 2003թ. սեպտեմբերի 25-ից ոչ ուշ:

- իրավաբանական անձի կազմից մեկ կամ մի քանի իրավաբանական անձանց առանձնանալու դեպքում՝ կանխավճարները հաշվարկում է վերակազմակերպված իրավաբանական անձը, եթե բաժանիչ հաշվեկշռով այլ բան նախատեսված չէ:

Օրինակ 9 “Գ” կազմակերպությունից 2003թ. սեպտեմբերի 15-ին առանձնացել են “Ա”, “Բ” և “Դ” կազմակերպությունները՝ բաժանիչ հաշվեկշռի համապատասխան (բաժանիչ հաշվեկշռով կանխավճարների գծով հարկային պարտավորությունների վերաբաշխում նախատեսված չէ): “Գ” կազմակերպության 2002թ. գործունեության արդյունքներով հաշվարկված շահութահարկի գումարը կազմել է 600.0 հազ. դրամ:

Առանձնանալուց հետո ևս “Գ” կազմակերպության ամսական կանխավճարի գումարը կկազմի 37,5 հազ. դրամ (600.0:16), իսկ “Ա”, “Բ” և “Դ” կազմակերպությունները 2003թ. ընթացքում կանխավճարներ չեն վճարում:

- իրավաբանական անձի վերակազմավորման (կազմակերպական-իրավական ձևի փոփոխում) դեպքում՝ կանխավճարները հաշվարկվում են ընդհանուր սահմանած կարգով:

Օրինակ 10. “Ա” ՍՊԸ 2003թ. սեպտեմբերի 15-ին վերակազմավորվել է “Ա” ՓԲԸ-ի՝ փոխանցման ակտին համաձայն: “Ա” ՍՊԸ 2002թ. գործունեության արդյունքներով հաշվարկված շահութահարկի գումարը կազմել է 600.0 հազ. դրամ:

Վերակազմավորումից հետո ևս “Ա” ՓԲԸ ամսական կանխավճարի գումարը կկազմի 37.5 հազ. դրամ (600.0:16):

զ) նախորդ տարում իրավաբանական անձանց վերակազմակերպման (միաձուլում, միացում, բաժանում, առանձնացում, վերակազմավորում) դեպքում կազմակերպությունները ընթացիկ տարում կանխավճարները հաշվարկում են ընդհանուր սահմանած կարգով:

է) այն կազմակերպությունների գծով, որոնց ԼԴՀ կառավարության որոշմամբ թույլատրվում է շահութահարկի հաշվարկումը, հաշվարկների ներկայացումը և վճարումը կատարել կենտրոնացված կարգով շահութահարկի կանխավճարները հաշվարկվում և վճարվում են, հաշվի առնելով հետևյալը.

- ընթացիկ տարում կենտրոնացված կարգով շահութահարկ վճարող դառնալու դեպքում կանխավճարները վճարում է (հաշվի առնելով յուրաքանչյուր կազմակերպության կանխավճարների գումարները) այն կազմակերպությունը, որի միջոցով կատարվում է շահութահարկի հաշվարկում և վճարում կենտրոնացված կարգով:

Օրինակ 11 “Ա”, “Բ”, “Գ”, և “Դ” կազմակերպությունները 2003թ. սեպտեմբերի 15-ին դարձել են կենտրոնացված կարգով շահութահարկ վճարող՝ “Գ” կազմակերպության միջոցով: “Ա” կազմակերպության 2002թ. գործունեության արդյունքներով հաշվարկված շահութահարկի գումարը կազմել է 600.0 հազ. դրամ, “Բ” կազմակերպությանը՝ 400.0 հազ. դրամ և “Դ” կազմակերպությանը՝ 1200.0 հազ. դրամ, իսկ “Գ” կազմակերպությանը 2002թ. տարեկան արդյունքներով ունեցել է հարկային վնաս:

Կենտրոնացված կարգով շահութահարկ վճարող դառնալուց հետո “Գ” կազմակերպության ամսական կանխավճարի գումարը կկազմի 137,5 հազ. դրամ. ((600.0+400+1200.0):16), որի առաջին վճարումը պետք է կատարվի 2003թ. սեպտեմբերի 25-ից ոչ ուշ:

-նախորդ տարում կենտրոնացված կարգով շահութահարկ վճարող դառնալու և ընթացիկ տարում նույն կարգով շահութահարկ վճարելու դեպքում, ընթացիկ տարում կանխավճարները վճարում է այն կազմակերպությունը, որի միջոցով կատարվում է շահութահարկի հաշվարկում և վճարում կենտրոնացված կարգով՝ ընդհանուր սահմանված կարգով:

-ընթացիկ կամ նախորդ տարում կենտրոնացված կարգով շահութահարկ վճարող կազմակերպությունները ընթացիկ տարում շահութահարկ հաշվարկելու և վճարելու ընդհանուր սահմանված կարգին անցնելու դեպքերում, ընթացիկ տարում կանխավճարները վճարում են՝ հաշվի առնելով նախորդ տարվա իրենց մասով հաշվարկված փաստացի շահութահարկի գումարները:

Օրինակ 12. “Ա”, “Բ”, “Գ” և “Դ” կազմակերպությունները մինչև 2003թ. հունվարի 1-ը շահութահարկը վճարում են կենտրոնացված կարգով՝ “Գ” կազմակերպության միջոցով, իսկ 2003թ. հունվարի 1-ից շահութահարկը հաշվարկում և վճարում են ընդհանուր սահմանած կարգով: “Ա” կազմակերպության 2002թ. գործունեությունից արդյունքներով հաշվարկված շահութահարկի գումարը կազմել է 600.0 հազ. դրամ “Բ” կազմակերպության՝ 80.0 հազ. դրամ և “Դ” կազմակերպությանը՝ 1200.0 հազ. դրամ, իսկ “Գ” կազմակերպությանը 2002թ. տարեկան արդյունքներով ունեցել է հարկային վնաս:

“Ա” և “Դ” կազմակերպությունների 2003թ. ամսական կանխավճարների գումարը կկազմի համապատասխանաբար 112.5 հազ. դրամ ($(1200+600.0):16$), իսկ “Բ” և “Գ” կազմակերպությունները 2003թ. ընթացքում կանխավճարներ չեն վճարում:

9.3.5. Մինչև նախորդ տարվա փաստացի շահութահարկի գումարի հաշվարկումը, հարկատուն շահութահարկի կանխավճարները յուրաքանչյուր անգամ կատարում է նախորդ տարվա վերջին կանխավճարի գումարից (ամսական հանրագումար) ոչ պակաս չափով:

Նախորդ տարվա փաստացի շահութահարկի գումարները հայտնի դառնալուց հետո փաստացի շահութահարկի հաշվարկի ներկայացմանը հաջորդող առաջին կանխավճարային մուծման ժամանակ կատարվում է մինչև հաշվարկի ներկայացմանը տվյալ տարվա ընթացքում կատարված կանխավճարների գումարների ճշտում (այդ թվում՝ նաև նախորդ տարում շահութահարկի կանխավճարներ չունեցող, սակայն այդ տարվա արդյունքներով ընթացիկ տարում կանխավճարներ կատարելու պարտավորություն ունեցող հարկատուների կողմից)՝ տարվա սկզբից աճող հանրագումարով և սույն հրահանգի 9.3.2. ենթակետում նշված չափերով:

Օրինակ 13 Կազմակերպության 2001թ. հաշվարկված ամսական կանխավճարների գումարը կազմել է 100.0 հազ. դրամ: Կազմակերպությունը 2002թ. մարտի 12-ին հարկային մարմին ներկայացրել է 2001թ. հաշվապահական հաշվետվություններ և փաստացի շահութահարկի հաշվարկը, ըստ որի 2001թ. հաշվարկված շահութահարկի գումարը կազմել է 1920.0 հազ. դրամ:

2002թ. ամսական կանխավճարի գումարը կկազմի 120.0 հազ. դրամ ($1920.0:16$): Ընդ որում կազմակերպությունը 2002թ. ընթացքում՝ ըստ ամիսների, կանխավճարների մուծումները կատարում է հետևյալ ժամկետներում և չափերով.

- 25.01.2002թ. և 25.02.2002թ.՝ ամսական 100.0 հազ. դրամ,
- 25.03.2002թ.՝ 160.0 հազ. դրամ ($120.0+(120.0-100.0) \times 2$),
- 25.04.2002թ....25.12.2002թ.՝ ամսական 120.0 հազ. դրամ

Օրինակ 14. Կազմակերպության 2001թ. հաշվարկված ամսական կանխավճարների գումարը կազմել է 100.0 հազ. դրամ: Կազմակերպությունը 2002թ. մարտի 10-ին հարկային մարմին ներկայացրել է 2001թ. հաշվապահական հաշվետվություններ և փաստացի շահութահարկի հաշվարկ, ըստ որի 2001թ. հաշվարկված շահութահարկի գումարը կազմել է 1280.0 հազ. դրամ:

2002թ. ամսական կանխավճարի գումարը կկազմի 80.0 հազ. դրամ ($1280.0:16$): Ընդ որում, կազմակերպությունը 2002թ. ընթացքում՝ ըստ ամիսների, կանխավճարների մուծումները կատարել է հետևյալ ժամկետներում և չափերով

- 25.01.2002թ. և 25.02.2002թ.՝ ամսական 100.0 հազ. դրամ,
- 25.03.2002թ.՝ 40.0 հազ. դրամ ($80.0+ (80.0-100.0) \times 2$),
- 25.04.2002....25.12.2002թ.՝ ամսական 80.0 հազ. դրամ:

9.3.6. Նախորդ տարվա նկատմամբ ընթացիկ տարվա հարկվող շահույթը պակաս նախատեսելու դեպքում հարկատուն այդ մասին նախորդ ք (բայց նախորդ տարվա շահութահարկի հաշվարկների օրենքով սահմանված ներկայացման ժամկետից ոչ ուշ) գրավոր հայտնում է հարկային մարմին և ամսական կանխավճարների մեծությունը որոշում է ինքնուրույն՝ հավասարաչափ բաշխելով ըստ ամիսների: Մինչև հայտարարության ներկայացմանը հաշվարկված կանխավճարների գծով վերահաշվարկ չի կատարվում:

Օրինակ 15. Կազմակերպության 2001թ. հաշվարկված ամսական կանխավճարների գումարը կազմել է 100.0 հազ. դրամ: Կազմակերպությունը 2002թ. մարտի 10-ին հարկային մարմին ներկայացրել է 2001թ. հարկվող շահույթը և հաշվարկված շահութահարկի գումարները կազմել են, համապատասխանաբար 19200.0 հազ. դրամ և 1920.0 հազ. դրամ: Կազմակերպությունը 2002թ. ապրիլի 12-ին գրավոր հայտնում է հարկային մարմին, որ 2002թ. հարկվող շահույթը նախատեսվում է 19200.0 հազ. դրամ գումարից պակաս և ընթացիկ տարվա ամսական կանխավճարները կատարելու է 60.0 հազ. դրամի չափով:

Այսպիսով, կազմակերպությունը 2002թ. ընթացքում՝ ըստ ամիսների, կանխավճարների մուծումները կատարում է հետևյալ ժամկետներում և չափերով.

- 25.01.2002թ. և 25.02.2002թ.՝ ամսական 100.0 հազ. դրամ ,
- 25.03.2002թ.՝ 160.0 հազ. դրամ (120.0+ (120.0-100.0) x 2)
- 25.04.2002թ. ... 25.12.2002թ.՝ ամսական 50.0հազ. դրամ:

Նույն օրինակում, եթե կազմակերպությունը հարկային մարմինն գրավոր տեղեկացնում է 2002թ. ապրիլի 16-ին, ապա 2002թ. ապրիլ ամսվա և հետագա ամիսների համար կանխավճարների մուծումները կատարվում են ամսական 120.0 հազ. դրամ գումարի չափով:

9.3.8. Հրահանգի 9.2.3. ենթակետի համաձայն հարկատուի կողմից հարկային մարմին ճշտված հաշվարկ ներկայացնելու դեպքում կատարվում է նաև հաշվարկված կանխավճարների գումարների վերահաշվարկ՝ այն տարվանը հաջորդող տարվանից սկսված, որի համար ներկայացվել է ճշտված հաշվարկը:

Օրինակ 16 Կազմակերպության 2002թ. հաշվարկված ամսական կանխավճարների գումարը կազմել է 100.0 հազ. դրամ: Կազմակերպության 2003թ. մարտի 10-ին հարկային մարմին ներկայացրել է 2002թ. հաշվապահական հաշվետվություններ և փաստացի շահութահարկի հաշվարկը, ըստ որի 2002թ. հարկվող շահույթը և հաշվարկված շահութահարկի գումարը կազմել են, համապատասխանաբար, 25600.0 հազ. դրամ և 1280.0 հազ. դրամ: Կազմակերպությունը 2003թ. հունիսի 12-ին հարկային մարմին ներկայացնում է 2002թ. փաստացի շահութահարկի ճշտված հաշվարկ, ըստ որի 2002թ. հարկվող շահույթը և հաշվարկված շահութահարկի գումարը կազմում են, համապատասխանաբար, 38400.0 հազ. դրամ և 1920.0 հազ. դրամ:

Այսպիսով, կազմակերպությունը 2003թ. հունվար փետրվար ամիսներին կանխավճարների մուծումները կատարում է ամսական 100.0 հազ. դրամ գումարի չափով, իսկ 2003թ. մարտի 10-ին փաստացի շահութահարկի հաշվարկը ներկայացնելուց հետո կատարվում է կանխավճարների գումարների վերահաշվարկ, ըստ որի ամսական կանխավճարային մուծումները կազմում են 75.0 հազ. դրամ (1200.0:16).

- 25.03.2003թ.՝ 40.0 հազ. դրամ (80.0+(80.0-100.0) x 2),
- 25.04.2003թ. և 25.05.2003թ.՝ ամսական 80.0 հազ. դրամ:

Փաստացի շահութահարկի ճշտված հաշվարկը ներկայացնելուց հետո կատարվում է հաշվարկված կանխավճարների վերահաշվարկ, ըստ որի ամսական կանխավճարային մուծումները կազմում են 120.0 հազ. դրամ (1920.0:16)

2003թ. մարտի 10-ին հարկային մարմին ճիշտ լրացված փաստացի շահութահարկի հաշվարկը ներկայացնելու դեպքում կազմակերպությունը 2003թ. ընթացքում կանխավճարների մուծումներն կկատարեր հետևյալ ժամկետներում և չափերով.

- 25.01.2003թ. և 25.02.2003թ.՝ ամսական 100.0 հազ. դրամ,
- 25.03.2003թ.՝ 160.0 հազ. դրամ (120.0+(120.0-100.0) x 2)
- 25.04.2003. ... 25.05.2003թ.՝ ամսական 120.0 հազ. դրամ;

2003թ. հունիսի 12-ին փաստացի շահութահարկի ճշտված հաշվարկը ներկայացնելուց հետո շահութահարկի կանխավճարների մուծումները կկատարեր հետևյալ ժամկետներում և չափերով.

- 25.01.2003թ. և 25.02.2003թ.՝ ամսական 100.0հազ. դրամ ,
- 25.03.2003թ.՝ 40.0 հազ. դրամ (80.0+ (80.0-100.0) x 2)
- 25.04.2003. ... 25.05.2003թ.՝ ամսական 80.0 հազ. դրամ ;
- 25.06.2003թ.՝ 320.0 հազ.դրամ (120.0+(120.0-80.0) x 5),
- 25.07.2003. ... 25.12.2003.՝ ամսական 120.0 հազ. դրամ:

Օրինակ 17. Կազմակերպության 2002թ.հաշվարկված ամսական կանխավճարների գումարը կազմել է 100.0 հազ. դրամ: Կազմակերպությունը 2003թ. մարտի 10-ին հարկային մարմին ներկայացրել է 2002թ. հաշվապահական հաշվետվություններ և փաստացի շահութահարկի հաշվարկը, ըստ որի 2002թ. հարկվող շահույթը և հաշվարկված շահութահարկի գումարը կազմել են համապատասխանաբար, 38400.0 հազ. դրամ և 1920.0հազ. դրամ: Կազմակերպությունը 2003թ. հունիսի 12-ին հարկային մարմին ներկայացնում է 2002թ. փաստացի շահութահարկի ճշտված հաշվարկ, ըստ որի 2002թ. հարկվող շահույթը և հաշվարկված շահութահարկի գումարը կազմում են, համապատասխանաբար, 19200.0 հազ. դրամ և 960.0 հազ. դրամ:

Այսպիսով, կազմակերպությունը 2003թ. հունվար - փետրվար ամիսներին կանխավճարների մուծումները կատարում է ամսական 100.0 հազ. դրամ գումարի չափով, իսկ 2003թ. մարտի 10-ին փաստացի շահութահարկի հաշվարկը ներկայացնելուց հետո կատարվում է կանխավճարների գումարների վերահաշվարկ, ըստ որի ամսական կանխավճարային մուծումները կազմում են 120.0 հազ. դրամ(1920.0:16).

- 25.03.2003թ.՝ 160.0հազ. դրամ (120.0+ (120.0-100.0) x 2),
- 25.04.2003թ և 25.05.2003թ՝ ամսական 120.0 հազ. դրամ:

Ճշտված հաշվարկը ներկայացնելուց հետո կատարվում է հաշվարկված կանխավճարների վերահաշվարկ, ըստ որի ամսական կանխավճարային մուծումները կազմում են 60.0 հազ. դրամ (960.0:16):

2003թ. մարտի 10-ին հարկային մարմին ճիշտ լրացված փաստացի շահութահարկի հաշվարկը ներկայացնելու դեպքում կազմակերպությունը 2003թ. ընթացքում կանխավճարների մուծումները կկատարեր հետևյալ ժամկետներում և չափերով.

- 25.01.2003թ. և 25.02.2003թ.՝ ամսական 100.0հազ. դրամ,

-25.03.2003թ.	20.0 հազ. դրամ (60.0+(60.0-100.0) x 2,
-25.04.2003թ.	40.0 հազ. դրամ (60.0-20.0),
-25.05.2003թ. ... 25.12.2003թ.	ամսական 60.0հազ.դրամ:
2003թ. հունիսի 12-ին փաստացի շահութահարկի ճշտված հաշվարկը ներկայացնելուց հետո շահութահարկի կանխավճարների հաշվարկը ունենալու է հետևյալ տեսքը.	
-25.01.2003թ. և 25.02.2003թ.	ամսական 100.0հազ. դրամ,
-25.03.2003թ.	160.0 հազ. դրամ (120.0+(120.0-100.0)x2),
-25.04.2003թ. և 25.05.2003թ.	ամսական 120.0հազ. դրամ:
-25.06.2003թ.	240.0 հազ. դրամ (60.0+(60.0-120.0)x5)
-25.07.2003թ.	180.0 հազ. դրամ (60.0-240.0),
-25.08.2003թ.	120.0 հազ. դրամ (60.0-180.0),
-25.09.2003թ.	60.0 հազ. դրամ (60.0-120.0),
-25.10.2003թ.	60.0 հազ. դրամ (60.0-60.0),
-25.11.2003թ. և 25.12.2003թ.	ամսական 60.0հազ. դրամ:

9.3.9. Ընթացիկ տարում կազմակերպության կողմից ինքնուրույն հայտնաբերված՝ նախորդ տարիներին ավել կամ պակաս ցույց տրված եկամուտները և (կամ) նվազեցումները (որոնք բխում են հաշվապահական հաշվառման մեջ տրվող գրանցումներից) շահութահարկով հարկման նպատակով հաշվի են առնվում հայտնաբերման տարվա հարկվող շահույթը որոշելիս (եթե այդ եկամուտները և (կամ) նվազեցումները վերաբերվում են ընթացիկ տարվան նախորդող երեք տարիներին) և ընթացիկ, ինչպես նաև նախորդ տարիների կանխավճարների վերահաշվարկ չի կատարվում:

9.3.10. Ընթացիկ տարում ստուգմամբ հայտնաբերված՝ նախորդ տարիներում ավել կամ պակաս ցույց տրված եկամուտները և (կամ) նվազեցումները շահութահարկով հարկման նպատակով հաշվի են առնվում հայտնաբերման տարվան հարկվող շահույթը որոշելիս (եթե այդ եկամուտները և (կամ) նվազեցումները վերաբերվում են ընթացիկ տարվանը նախորդող երեք տարիներին)՝ ԼՂՀ ՀՊՎ 4 մայիսի 1999թ. թիվ 07 հրամանով հաստատված՝ “Ստուգումներով հայտնաբերված հարկերի, դրանց գծով հաշվարկված ֆինանսական պատժամիջոցների հաշվապահական ձևակերպումների և հաշվետվություններում և հարկային հաշվարկներում դրանց արտացոլման վերաբերյալ” հրահանգչական նամակի համաձայն և ընթացիկ, ինչպես նաև նախորդ տարիների կանխավճարների վերահաշվարկ չի կատարվում:

Եթե ընթացիկ տարում մինչև նախորդ տարվա փաստացի շահութահարկի հաշվարկների օրենքով սահմանված ներկայացման ժամկետը, բայց հարկատուի կողմից նախորդ տարվա փաստացի շահութահարկի հաշվարկը հարկային մարմին ներկայացնելուց հետո, տվյալ հարկատուի մոտ կատարված ստուգմամբ հայտնաբերվել է նախորդ տարվա արդյունքներով վճարման ենթակա լրացուցիչ շահութահարկի գումարներ, ապա հաշվարկված տուգանքները ենթակա են պետական բյուջե վճարման համապատասխան ակտ ներկայացնելուց հետո 10-օրյա ժամկետում, իսկ լրացուցիչ հայտնաբերված շահութահարկը ենթակա է պետական բյուջե վճարման ընթացիկ տարվա ապրիլի 25-ից ոչ ուշ: Այդ ժամկետից սկսվում է նախորդ տարվա հաշվարկված շահութահարկի (այդ թվում՝ լրացուցիչ հայտնաբերված) չվճարված գումարների գծով տույժերի հաշվարկը՝ “Հարկերի մասին” ԼՂՀ օրենքի 23 հոդվածով նախատեսված չափերով:

Օրինակ 18 Կազմակերպությունը 2002թ. ընթացքում շահութահարկի կանխավճար վճարող չի եղել: Կազմակերպությունը 2003թ. փետրվարի 12-ին հարկային մարմին ներկայացրել է 2002թ. հաշվապահական հաշվետվություններ և փաստացի շահութահարկի հաշվարկ, ըստ որի 2002թ. հաշվարկված շահութահարկի գումարը կազմել է 600.0 հազ. դրամ: 2003թ. փետրվար-մարտ ամիսներին հարկային մարմինների կողմից կազմակերպությունում կատարված ստուգմամբ լրացուցիչ գանձման է առաջադրվել շահութահարկ (400.0 հազ. դրամ), որը վերաբերվում է 2002թ. կազմակերպության գործունեությանը: Ստուգման ակտը կազմվել է 2003թ. ապրիլի 12-ին:

Տվյալ դեպքում 2002թ. փաստացի շահութահարկի հաշվարկում արտացոլված և ստուգմամբ լրացուցիչ հայտնաբերված 2002թ. շահութահարկի գումարները (համապատասխանաբար՝ 600.0 և 400.0 հազ. դրամ) կազմակերպությունը պարտավոր է վճարել մինչև 2003թ. ապրիլի 25-ը (ներառյալ): Այդ ժամկետից սկսած հաշվարկվում են տույժեր “Հարկերի մասին” ԼՂՀ օրենքի 23 հոդվածով սահմանված կարգով՝ շահութահարկի չվճարված գումարների նկատմամբ: Ընդ որում, 2003թ. շահութահարկի կանխավճարների վերահաշվարկ չի կատարվում:

9.3.11. Հաշվետու տարվա ավարտից հետո հարկատուն, ելնելով հաշվարկված հարկվող շահույթի մեծությունից, հաշվարկվում է պետական բյուջե վճարման ենթակա շահութահարկի գումարը՝ հաշվանցելով տվյալ հաշվետու տարվա համար կատարված կանխավճարների գումարները:

Եթե հաշվետու տարվա փաստացի շահութահարկի գումարը պակաս է տվյալ տարվա համար կատարված կանխավճարների հանրագումարից, ապա դրանց տարբերությունը ենթակա է հաշվանցման հարկատուի այլ հարկային պարտավորությունների հաշվին կամ վերադարձման՝ “Հարկերի մասին” ԼՂՀ օրենքի 34 հոդվածի համաձայն:

Եթե կատարված կանխավճարների հանրագումարը պակաս է տվյալ հաշվետու տարվա փաստացի շահութահարկի գումարից, ապա վերահաշվարկ է կատարվում միայն շահութահարկի գծով և հարկատուն պարտավոր է առաջացած տարբերությունը վճարել պետական բյուջե:

Շահութահարկի գումարի վճարումն ուշացնելու համար տույժերի հաշվարկը սկսվում է տվյալ հաշվետու տարվանը հաջորդող տարվա ապրիլի 25-ից՝ շահութահարկի գումարի չվճարված մասի նկատմամբ, «Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 23 հոդվածով նախատեսված չափերով:

9.3.12. Սահմանված ժամկետներում հարկատուի կողմից կանխավճարային մուծումներ չկատարելու դեպքում հարկային մարմիններն այդ կանխավճարային գումարների և դրանց գծով հաշվարկված տույժերի վերաբերյալ պահանջներ են ներկայացնում օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վերոհիշյալ տույժը կիրառվում է ժամանակին չմուծված շահութահարկի կանխավճարային մուծումների գումարների նկատմամբ, «Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 23 հոդվածով նախատեսված չափերով: Հաշվետու տարվա կանխավճարների նկատմամբ տույժերի հաշվարկը դադարեցվում է հարկային մարմին հաշվետու տարվա փաստացի շահութահարկի գումարի հայտնի դառնալու (շահութահարկի հաշվարկը ներկայացնելու) օրը, բայց ոչ ուշ հաշվետու տարվանը հաջորդող ապրիլի 25-ը: Կանխավճարների նկատմամբ հաշվարկված տույժերի գումարներն վերահաշվարկման կամ վերադարձման ենթակա չեն:

Օրինակ 19. Հրահանգի 14 օրինակում բերված դեպքում կազմակերպությունը 2002թ. ինչպես նաև 2003թ. հունվար-մարտ ամիսների (ամսական՝ 80.0 հազ. դրամ) շահութահարկի կանխավճարները կատարել է սահմանված ժամկետներում և չափերով: Կազմակերպությունը 2003թ. ապրիլի 10-ին հարկային մարմին ներկայացրել է 2002թ. հաշվապահական հաշվետվություններ և փաստացի շահութահարկի հաշվարկ, ըստ որի 2002թ. փաստացի շահութահարկը կազմել է 2080.0 հազ. դրամ:

Տվյալ դեպքում մինչև 2003թ. ապրիլի 25-ը (ներառյալ) կազմակերպությունը վճարում է շահութահարկ՝ 1120.0 հազ. դրամ ($2080.0 - (2 \times 100.0 + 40.0 + 9 \times 80.0)$), ինչպես նաև ապրիլ ամսվա կանխավճար՝ 280.0 հազ. դրամ ($2080.0 : 16 \times 4 - 3 \times 80.0$) գումարի չափով, իսկ 2002թ. և 2003թ. հունվար-մարտ ամիսների համար հաշվարկված և վճարված կանխավճարների գծով տույժերը չեն հաշվարկվում:

Նույն օրինակում, եթե կազմակերպությունը 2002թ. և 2003թ. հունվար-մարտ ամիսների շահութահարկի կանխավճարները կատարել է ոչ ամբողջությամբ (օրինակ, հաշվարկված ամսական կանխավճարների գումարների 60%-ի չափով) և մինչև 2003թ. ապրիլի 25-ը (ներառյալ) վճարել է 1120.0 հազ. դրամ շահութահարկ ու 280.0 հազ. դրամ ապրիլ ամսվա կանխավճար, ապա 2002թ. համար հաշվարկված և չվճարված կանխավճարների նկատմամբ (այսինքն՝ հաշվարկված ամսական կանխավճարների գումարների 40%-ի նկատմամբ) հաշվարկվում են տույժեր՝ մինչև 2003թ. ապրիլի 10-ը: Տույժերի հաշվարկի դադարեցումը չի վերաբերվում 2003թ. հունվար-մարտ ամիսների համար հաշվարկված և չվճարված (մասնակի չվճարված) կանխավճարների գումարներին: Միաժամանակ, 2003թ. ապրիլի 25-ից տույժեր են հաշվարկվում 2002թ. համար հաշվարկված և չվճարված շահութահարկի՝ 384.0 հազ. դրամ $92080.0 - ((2 \times 100.0 + 40.0 + 9 \times 80.0) \times 60\% + 1120.0)$ գումարի նկատմամբ:

Օրինակ 20 Հրահանգի 14 օրինակում բերված դեպքում կազմակերպությունը 2002թ., ինչպես նաև 2003թ. հունվար-մարտ ամիսների (ամսական 80.0 հազ. դրամ) շահութահարկի կանխավճարները կատարել է սահմանված ժամկետներում և չափերով: Կազմակերպությունը 2003թ. ապրիլի 10-ին հարկային մարմին ներկայացրել է 2002թ. հաշվապահական հաշվետվություններ և փաստացի շահութահարկի հաշվարկ, ըստ որի 2002թ. փաստացի շահութահարկը կազմել է 40.0 հազ. դրամ:

Տվյալ դեպքում կազմակերպության կողմից 2002թ. համար ավել վճարված շահութահարկի գումարը՝ 920.0 հազ. դրամ ($1280.0 \times 75\% - 40.0$) և 2003թ. հունվար-մարտ ամիսներին կատարված շահութահարկի կանխավճարների գումարը՝ 240.0 հազ. դրամ (3×80.0) ենթակա են հաշվանցման հարկատուի այլ հարկային պարտավորությունների հաշվին, կամ վերադարձման «Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 34 հոդվածի համաձայն:

Նույն օրինակում, եթե կազմակերպությունը 2002թ. և 2003թ. հունվար-մարտ ամիսների շահութահարկի կանխավճարները կատարել է ոչ ամբողջությամբ (օրինակ հաշվարկված ամսական կանխավճարների գումարների 60%-ի չափով), ապա 2002թ. և 2003թ. հունվար-մարտ ամիսների համար հաշվարկված և չվճարված կանխավճարների գումարների նկատմամբ (այսինքն՝ հաշվարկված ամսական կանխավճարների գումարների 40%-ի նկատմամբ) հաշվարկվում են տույժեր մինչև 2003թ. ապրիլի 10-ը: Միաժամանակ, կազմակերպության կողմից 2002թ. համար ավել վճարված շահութահարկի՝ 536.0 հազ. դրամ ($((2 \times 100.0 + 40.0 + 9 \times 80.0) \times 60\% - 40.0)$) և 2003թ. հունվար-մարտ ամիսներին կատարված շահութահարկի կանխավճարների՝ 240.0 հազ. դրամ (3×80.0) գումարները ենթակա են հաշվանցման հարկատուի այլ հարկային պարտավորությունների հաշվին կամ վերադարձման «Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 34 հոդվածի համաձայն:

9.3.13. Հրահանգի 9.3.6. ենթակետի պայմաններում կանխավճարների տարեկան հանրագումարը տվյալ տարվա փաստացի շահութահարկի 75%-ից պակաս լինելու դեպքում հարկատուն վճարում է տույժ՝ փաստացի ստացված շահութահարկի մեկ տասնվեցերորդի և տվյալ ամսվա փաստացի վճարված կանխավճարի տարբերության գումարի նկատմամբ՝ կանխավճարի վճարման համար

հարահանգի 9.3.2. ենթակետում նախատեսված օրվանից մինչև հարկային մարմինն փաստացի շահութահարկի գումարի հայտնի դառնալու (շահութահարկի հաշվարկը ներկայացնելու) օրը:

Նշված դրույթները վերաբերվում են նաև այն դեպքերին, երբ հարկատու ընթացիկ տարում կանխավճարներ չի կատարում եկամուտներ չնախատեսելու (գործունեություն չիրականացնելու) վերաբերյալ նախորոք (նախորդ տարվա փաստացի շահութահարկի հաշվարկների օրենքով սահմանված ներկայացման ժամկետից ոչ ուշ) հարկային մարմինն գրավոր հայտնելուց հետո:

Օրինակ 21. Հրահանգի 15 օրինակում բերված դեպքում կազմակերպությունը շահութահարկի կանխավճարները 2002թ. ինչպես նաև 2003թ. հունվար-մարտ ամիսների (ամսական 50.0 հազ. դրամ) ընթացքում կատարել է սահմանված ժամկետներում և չափերով: Կազմակերպությունը 2003թ. ապրիլի 10-ին հարկային մարմին ներկայացրել է 2002թ. հաշվապահական հաշվետվություններ և փաստացի շահութահարկի հաշվարկ, ըստ որի 2002թ. փաստացի շահութահարկը կազմել է 1040.0 հազ. դրամ (այսինքն 2002թ. հաշվարկված և վճարված կանխավճարների գումարը $(2 \times 100.0 + 160.0 + 9 \times 50.0) = 810.0$ հազ. դրամ) գերազանցում է 2002թ. փաստացի շահութահարկի 75%-ը $(1040.0 \times 75\% = 780.0$ հազ. դրամ):

Տվյալ դեպքում մինչև 2003թ. ապրիլի 25-ը (ներառյալ) կազմակերպությունը վճարում է շահութահարկ՝ 230.0 հազ. դրամ $(1040.0 - 810.0)$, ինչպես նաև ապրիլ ամսվա կանխավճար՝ 110.0 հազ. դրամ $(1040.0 : 16 \times 4 - 3 \times 50.0)$ գումարի չափով, իսկ 2002 և 2003թ. հունվար-մարտ ամիսների համար հաշվարկված և վճարված կանխավճարների գծով տույժեր չեն հաշվարկվում:

Նույն օրինակում, եթե կազմակերպությունը շահութահարկի կանխավճարները 2002թ. և 2003թ. հունվար մարտ ամիսների ընթացքում կատարել է ոչ ամբողջությամբ (օրինակ, հաշվարկված ամսական կանխավճարների գումարների 60%-ի չափով) և մինչև 2003թ. ապրիլի 25-ը (ներառյալ) վճարել է 230.0 հազ. դրամ շահութահարկ ու 110.0 հազ. դրամ ապրիլ ամսվա կանխավճար, ապա 2002թ. համար հաշվարկված և չվճարված կանխավճարների նկատմամբ (այսինքն՝ հաշվարկված ամսական կանխավճարների գումարների 40%-ի նկատմամբ) հաշվարկվում են տույժեր՝ մինչև 2003թ. ապրիլի 10-ը: Տույժերի հաշվարկի դադարեցումը չի վերաբերվում 2003թ. հունվար-մարտ ամիսների համար հաշվարկված և չվճարված շահութահարկի կանխավճարների գումարները: Միաժամանակ 2003թ. ապրիլի 25-ից տույժերը հաշվարկվում են 2002թ. համար հաշվարկված և չվճարված շահութահարկի՝ 324.0 հազ. դրամ $(1040.0 - (810 \times 60\% + 230.0))$ գումարի նկատմամբ:

Օրինակ 22. Հրահանգի 15 օրինակում բերված դեպքում կազմակերպությունը շահութահարկի կանխավճարները 2002թ. ինչպես նաև 2003թ. հունվար-մարտ ամիսների (ամսական՝ 50.0 հազ. դրամ) ընթացքում կատարել է սահմանված ժամկետներում և չափերով: Կազմակերպությունը 2003թ. ապրիլի 10-ին հարկային մարմին ներկայացրել է 2002թ. հաշվապահական հաշվետվություններ և փաստացի շահութահարկի հաշվարկ, ըստ որի 2002թ. փաստացի շահութահարկը կազմել է 2080.0 հազ. դրամ (այսինքն՝ 2002թ. հաշվարկված և վճարված կանխավճարների գումարը $(2 \times 100.0 + 160.0 + 9 \times 50.0) = 810.0$ հազ. դրամ) պակաս է 2002թ. փաստացի շահութահարկի 75%-ից $(2080.0 \times 75\% = 1560.0$ հազ. դրամ):

Տվյալ դեպքում 2002թ. և 2003թ. հունվար-մարտ ամիսների համար կատարվում է հաշվարկված կանխավճարների վերահաշվարկ՝ ամսական 130.0 հազ. դրամ $(2080.0 : 16)$ և հաշվարկվում են տույժեր հետևյալ գումարների նկատմամբ.

-25.04.2003թ.՝ 110.0 հազ. դրամ $((4 \times 130.0 - (100.0 + 100.0 + 160.0 + 50.0))$.

-25.05.2003թ. ... 25.03.2003թ.՝ ամսական 80.0 հազ. դրամ $(130.0 - 50.0)$:

Ընդ որում, 2002թ. համար վերահաշվարկված և չվճարված կանխավճարների նկատմամբ տույժերը հաշվարկվում են մինչև 2003թ. ապրիլի 10-ը: Տույժերի հաշվարկի դադարեցումը չի վերաբերվում 2003թ. հունվար-մարտ ամիսների համար վերահաշվարկված և չվճարված (մասնակի չվճարված) կանխավճարների գումարներին:

Մինչև 2003թ. ապրիլի 25-ը կազմակերպությունը վճարում է շահութահարկ՝ 520.0 հազ. դրամ $(2080.0 - 1560.0)$, ինչպես նաև ապրիլ ամսվա կանխավճար՝ 130.0 հազ. դրամ գումարի չափով:

9.3.14. Կազմակերպության կողմից նախորդ տարվա փաստացի շահութահարկի ճշտված հաշվարկ հարկային մարմիններին ներկայացնելու դեպքում կատարվում է հաշվարկված կանխավճարների վերահաշվարկ՝ այն տարվանը հաջորդող տարվանից սկսած, որի համար ներկայացրել է ճշտված հաշվարկը, ինչպես նաև վերահաշվարկված կանխավճարների չվճարված գումարների նկատմամբ տույժերի վերահաշվարկ:

Օրինակ 23. Հրահանգի 16 օրինակում բերված դեպքում, եթե կազմակերպությունը կանխավճարների մուծումներ 2003թ. ընթացքում ընդհանրապես չի կատարել, ապա հաշվարկված և չվճարված կանխավճարների նկատմամբ տույժերը հաշվարկվում են հետևյալ գումարների նկատմամբ և ժամկետներից սկսած.

ա) մինչև 2002 թ. փաստացի շահութահարկի ճշտված հաշվարկ ներկայացնելը (12.06.2002թ.)

- 25.01.2003թ.՝ 100.0 հազ. դրամ .

- 25.02.2003թ.՝ 200.0 հազ. դրամ $(100.0 + 100.0)$

- 25.03.2003թ.՝ 240.0 հազ. դրամ $(200.0 + 40.0)$,

- 25.04.2003թ.՝ 320.0 հազ. դրամ $(240.0 + 80.0)$

- 25.05.2003թ.՝ 400.0 հազ. դրամ $(320.0 + 80.0)$

բ) 2002թ. փաստացի շահութահարկի ճշտված հաշվարկ ներկայացնելուց հետո ,

-25.01.2003թ.	100.0 հազ. դրամ .
-25.02.2003թ.	200.0 հազ. դրամ (100.0+100.0),
-25.03.2003թ.	360.0 հազ. դրամ (160.0+200.0),
-25.04.2003թ.	480.0 հազ. դրամ (120.0+360.0),
- 25.05.2003թ.	600.0հազ. դրամ (120.0+480.0)
-25.06.2003թ.	720.0 հազ. դրամ (120.0+600.0),
- 25.07.2003թ.	840.0 հազ. դրամ(120.0+720.0),
-25.08.2003թ.	960.0 հազ. դրամ(120.0+840.0),
-25.09.2003թ.	1080.0հազ. դրամ(120.0+960.0),
-25.10.2003թ.	1200.0 հազ. դրամ (120.0+1080.0),
-25.11.2003թ.	1320.0 հազ. դրամ (120.0+1200.0),
-25.12.2003թ.	1440.0 հազ. դրամ (120.0+1320.0):

Օրինակ 24. Հրահանգի 17 օրինակում բերված դեպքում, եթե կազմակերպությունը կանխավճարների մուծումներ 2003թ. ընթացքում ընդհանրապես չի կատարել, ապա հաշվարկված և չվճարված կանխավճարների նկատմամբ տույժերը հաշվարկվում են հետևյալ գումարների նկատմամբ և ժամկետներից սկսած.

ա) մինչև 2002թ. փաստացի շահութահարկի ճշտված հաշվարկ ներկայացնելը (12.06.2003.թ.)

-25.01.2003թ.	100.0հազ. դրամ ,
-25.02.2003թ.	200.0 հազ. դրամ(100.0+100.0),
-25.03.2003թ.	360.0հազ. դրամ (160.0+200.0),
-25.04.2003թ.	480.0 հազ. դրամ (120.0+360.0),
-25.05.2003թ.	600.0հազ.դրամ (120.0+480.0):

բ)2002թ. փաստացի շահութահարկի ճշտված հաշվարկ ներկայացնելուց հետո .

-25.01.2003թ.	100.0հազ. դրամ,
-25.02.2003թ.	200.0հազ. դրամ(100.0+100.0),
-25.03.2003թ.	180.0հազ. դրամ (200.0-20.0),
-25.04.2003թ.	240.0 հազ. դրամ (60.0+180.0),
25.05.2003թ.	300.0 հազ. դրամ(60.0+240.0),
-25.06.2003թ.	360.0 հազ. դրամ (60.0+300.0),
-25.07.2003թ.	420.0 հազ. դրամ(60.0+360.0),
-25.08.2003թ.	480.0հազ. դրամ (60.0+420.0)
-25.09.2003թ.	540.0 հազ. դրամ(60.0+480.0),
-25.10.2003թ.	600.0 հազ. դրամ(60.0+540.0),
-25.11.2003թ.	660.0հազ.դրամ (60.0+600.0),
-25.12.2003թ.	720.0 հազ. դրամ (60.0+660.0),

9.3.15. Կազմակերպության անվճարունակ ճանաչելու պահից կասեցվում են շահութահարկի (և շահութահարկի կանխավճարների), դրա գծով հաշվարկված տույժերի և տուգանքների գումարների վճարումները՝ մինչև պարտատերերի պահանջները բավարարելու վերաբերյալ օրենքով սահմանված հերթականությունը համապատասխան պետական բյուջեի պահանջները բավարարելու հերթը հասնելը:

9.4. Շահութահարկի գումարի վճարումը

Հարկատուն պարտավոր է շահութահարկի գումարը վճարել բյուջե՝ մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա ապրիլի 25-ը ներառյալ:

9.5. Անվճարունակության գործընթացում գտնվող հարկատուի կողմից շահութահարկի վճարման առանձնահատկությունները

9.5.1.Բանկերի անվճարունակությունը կարգավորող օրենսդրության համաձայն՝ բանկը լուծարելու և լուծարային կառավարիչ նշանակելու մասին դատարանի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հարկատու բանկը շահութահարկի վճարումները կասեցվում են մինչև պարտատերերի պահանջները բավարարելու վերաբերյալ օրենքով սահմանված հերթականությանը համապատասխան՝ պետական բյուջեի պահանջները բավարարելու հերթի հասնելը.

9.5.2. Կազմակերպությունների անվճարունակությունը կարգավորող օրենսդրությանը համաձայն հարկատուին անվճարունակ ճանաչելու մասին դատարանի որոշումն ուժի մեջ մտնելու պահից շահութահարկի վճարումները կասեցվում են մինչև պարտատերերի պահանջները բավարարելու վերաբերյալ օրենքով սահմանված հերթականությունը համապատասխան պետական բյուջեի պահանջները բավարարելու հերթի հասնելը.

9.6. Լուծարման գործընթացում գտնվող հարկատուի կողմից շահութահարկի վճարման առանձնահատկություններ:

Առանց անվճարունակության ընթացակարգն անցնելու լուծարվող հարկատուի շահութահարկի վճարումները կասեցվում են լուծարման մասին որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պարտատերերի պահանջները բավարարելու վերաբերյալ օրենքով սահմանված հերթականությանը համապատասխան՝ պետական բյուջեի պահանջները բավարարելու հերթի հասնելը.

9.7 Մինչև օրենսդրությամբ սահմանված ժամկետի լրանալը շահութահարկի գանձում:

Եթե հարկային մարմինն ունի փաստեր այն մասին, որ չմարված հարկային պարտավորություններ ունեցող հարկատուն վերացնում «լուծարում» է եկամուտ «շահույթ» առաջացնող իր օբյեկտը կամ թաքցնում է եկամուտը «շահույթը», որի հետևանքով հնարավոր չի դառնում գանձել շահութահարկը, ապա հարկային մարմինը կարող է միջոցներ ձեռնարկել, մինչև հաշվետու ժամանակաշրջանի ավարտը, շահութահարկ գանձելու ուղղությամբ. Այդ դեպքում հարկային մարմինը կարող է պահանջել տվյալ ժամանակաշրջանի հաշվապահական «ֆինանսական» հաշվետվություններ և փաստացի շահութահարկի հաշվարկները, ինչպես նաև հարկատուի կողմից այդ հաշվարկներով հաշվարկված փաստացի շահութահարկի վճարում՝ մինչև հարկային օրենսդրությամբ սահմանված ժամկետի լրանալը.

9.8. Ավել բյուջե վճարված շահութահարկի գումարները հարկատուին վերադարձնելը «հաշվանցելը»

Սույն հրահանգում նշված կարգով շահութահարկի գծով հաշվարկված հարկային պարտավորություններից «այդ թվում կանխավճարներ» ավել վճարված գումարները «գերավճարները» հարկային տեսչության մարմինների կողմից հաշվանցվում են հարկատուի այլ հարկային պարտավորությունների «տույժերի, տուգանքների, ապա՝ հարկերի գումարների» հաշվին, իսկ այդ «այլ. հարկային պարտավորություններին գերազանցող գումարները վերադարձվում են վերջինիս՝ ոչ ուշ, քան վերադարձման մասին հարկատուի դիմումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում.

Ավել վճարված շահութահարկի գումարները հարկատուին վերադարձվում են ԼԴՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից.

9.9. Օտարերկրյա պետություններում ստացված շահույթից «եկամտից» վճարված շահութահարկի գումարների հաշվանցումը

ԼԴՀ հարկատուից գանձվող շահութահարկը նվազեցվում է շահութահարկի այն գումարի չափով, որը գանձվել է ռեզիդենտներից օտարերկրյա պետություններում՝ իրենց օրենսդրությանը համապատասխան, իրենց պետության տարածքում ստացված շահույթից «եկամտից»: Ընդ որում, նվազեցվող շահութահարկի գումարը չի կարող գերազանցել օտարերկրյա պետություններում ստացված շահույթից «եկամտից»՝ սույն հրահանգին համապատասխան ԼԴՀ -ում վճարման ենթակա շահութահարկի գումարին.

Նման նվազեցումների իրականացման համար հիմք են հանդիսանում հարկատուի կողմից օտարերկրյա պետություններում վճարված հարկի գումարների վերաբերյալ համապատասխան տեղեկանքները կամայական ձևով կազմված, սակայն վճարված հարկի գումարների վերաբերյալ տեղեկություններ պարունակող, որոնք պետք է վավերացված լինեն այդ պետությունների հարկ գանձող համապատասխան մարմինների կողմից.

Եթե սույն կետի առաջին մասի համաձայն նվազեցման ենթակա գումարը գերազանցում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով առաջացած շահութահարկի պարտավորությունը, ապա գերազանցող գումարը նվազեցվում է հարկատուի հաջորդ տարիների շահութահարկի գումարից.

Օրինակ 25. Ռեզիդենտ կազմակերպությունը ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում «Ն» երկրի տարածքում՝ առանձնացված ստորաբաժանման միջոցով .

Հաշվետու տարում կազմակերպությունը ԼԴՀ-ում գործունեության իրականացումից ստացել է 12.0 մլն. դրամ համախառն եկամուտ և «Ն» երկրում գործունեության իրականացումից՝ 3.0 մլն. դրամին համարժեք համախառն եկամուտ.

Ընդունեք որ «Ն» երկրի օրենսդրության համաձայն այդ երկրում ակտիվ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող օտարերկրյա իրավաբանական անձանց շահույթը հարկվում է 32 % դրույթաչափով.

1.«Ն» երկրի օրենսդրության համաձայն հաշվարկված հարկվող շահույթը կազմել է 0.8 մլն. դրամ, իսկ վճարված շահութահարկը կազմել է 0.256 մլն դրամ.

2.ԼԴՀ-ում շահութահարկի հաշվարկման նպատակով կատարվում են հետևյալ հաշվարկները.

- բոլոր աղբյուրներից համախառն եկամուտը կազմում է 15.0 մլն. դրամ (12.0+3.0).

-ԼԴՀ օրենսդրության համաձայն հաշվարկված հարկվող շահույթը կազմել է 4.0 մլն. դրամ

-շահութահարկի գումարը կկազմի 0.2 մլն. դրամ (4.0x5%):

3. «Ն» երկրում վճարված շահութահարկի գումարի չափով կատարվում է հաշվանցում հետևյալ կարգով .

- որոշվում է հաշվանցման թույլատրելի չափը

- հարկող շահույթի որոշման նպատակով համախառն եկամտից կատարվում են նվազեցումներ, որոնք սահմանված են ԼԴՀ օրենսդրությամբ.

- հարկվող շահույթը կազմում է 1.0 մլն. դրամ.

հաշվարկվում է ԼԴՀ օրենսդրության համաձայն շահութահարկի գումարը՝ 1.0 մլն. դրամx5%=0.05 մլն դրամ:

Այսպիսով, հաշվանցման սահմանային չափը կազմում է 0.05 մլն. դրամ, իսկ «Ն» երկրի տարածքում փաստացի վճարվել է 0.256 մլն. դրամ:

Թույլատրվում է «Ն» երկրի տարածքում վճարված հարկի գծով կատարել հաշվանցում միայն 0.05 մլն. դրամի չափով: Աղյուսքում ենթակա է լրացուցիչ վճարման 0.75 մլն. դրամը (0.8-0.05):

Օրինակ 26. Ռեզիդենտ կազմակերպությունը ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում «Մ» երկրում՝ առանձնացված ստորաբաժանման միջոցով:

Հաշվետու տարում կազմակերպությունը ԼՂՀ-ում գործունեության իրականացումից ստացել է 30.0 մլն. դրամ համախառն եկամուտ «Մ» երկրի տարածքում գործունեության իրականացումից՝ 50.0 մլն. դրամին համարժեք գումարի համախառն եկամուտ:

Ընդունեք, որ «Մ» երկրի օրենսդրությանը համապատասխան այդ երկրում ակտիվ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող օտարերկրյա իրավաբանական անձանց շահույթը հարկվում է 35% դրույքաչափով:

«Մ» երկրի օրենսդրությանը համաձայն հաշվարկված հարկվող շահույթը կազմել է 13.0 մլն. դրամ, իսկ վճարված շահութահարկը՝ 4.55 մլն. դրամ:

ԼՂՀ-ում շահութահարկի հաշվարկման նպատակով կատարում են հետևյալ հաշվարկները
-բոլոր աղբյուրներից համախառն եկամուտը կազմում է 80.0 մլն. դրամ (30.0+50.0).

-ԼՂՀ օրենսդրության համաձայն հաշվարկված հարկվող շահույթը կազմել է 20.0մլն. դրամ
-շահութահարկի գումարը կկազմի 1.0 մլն դրամ (20.0x5%).

«Մ» երկրում վճարված շահութահարկի գումարի չափով կատարվում է հաշվանցում հետևյալ կարգով.

- որոշվում է հաշվանցման թույլատրելի սահմանային չափը

- հարկվող շահույթի որոշման նպատակով համախառն եկամտից կատարվում են նվազեցումներ, որոնք սահմանված են ԼՂՀ օրենսդրությամբ.

- հարկվող շահույթը կազմում է 22.0 մլն դրամ.

Հաշվարկվում է ԼՂՀ օրենսդրությանը համաձայն շահութահարկի գումարի՝ 22.0 մլն. դրամx5% =1.1 մլն. դրամ:

Այսպիսով «Մ» երկրում փաստացի վճարվել է 4.55 մլն. դրամ, իսկ հաշվանցման սահմանային չափը կազմում է 1.1 մլն. դրամ: Հաշվետու ժամանակաշրջանում շահութահարկի պարտավորության գումարից (4.0մլն.դրամ) հաշվանցվում է սահմանային չափից միայն 4.0 մլն. դրամը, իսկ սահմանային չափի (1.1 մլն. դրամ) և հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով առաջացած շահութահարկի պարտավորության (4.0մլն.դրամ) դրական տարբերությունը (0.4մլն. դրամ (4.4-4,0)) ենթակա է նվազեցման հարկատուի հաջորդ տարիների շահութահարկի գումարից.

9.10. Շահութահարկի գումարների հաշվառումը հարկային մարմինների կողմից

Հաշվարկված շահութահարկի կանխավճարները, փաստացի հարկի գումարները, շահութահարկի գծով հաշվարկված տույժերը և տուգանքները, ինչպես նաև հարկատուի կողմից այդ գումարների վճարումները հարկային մարմինների կողմից հաշվառվում են հարկատուի անձնական հաշվի քարտերով:

10. Հարկատուների և դրանց պաշտոնատար անձանց պատասխանատվությունը

10.1. Շահութահարկի գումարները ճիշտ հաշվարկելու, ժամանակին վճարելու, հարկային օրենսդրության մյուս պահանջները կատարելու պատասխանատվությունը կրում են հարկատուները և դրանց պաշտոնատար անձինք:

10.2. Շահութահարկի գումարները ճիշտ չհաշվարկելու, ժամանակին չվճարելու, շահութահարկի հաշվարկները հարկային մարմիններին ժամանակին չներկայացնելու (կամ ընդհանրապես չներկայացնելու), հաշվապահական հաշվառում չվարելու կամ սահմանված կարգի խախտումներով այն վարելու, հաշվապահական հաշվետվություններ և շահութահարկի հաշվարկները սխալ կազմելու, հարկվող շահույթը թաքցնելու կամ այն պակաս ցույց տալու և հարկային օրենսդրության մյուս պահանջները խախտելու համար հարկատուները և դրանց պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

10.3. Հարկվող օբյեկտը թաքցնելու կամ պակաս ցույց տալու համար նախատեսված տուգանքները չեն կիրառվում այն հարկատուների նկատմամբ, որոնք մինչև հարկային մարմինների ստուգումների սկսվելն ինքնուրույն հայտնաբերել են իրենց կողմից նախորդ տարիների շահութահարկի պակաս հաշվարկում, հաշվապահական հաշվառման մեջ տվել են համապատասխան գրանցումներ և այդ մասին գրավոր տեղյակ են պահել իրենց հաշվառման վայրի հարկային տեսչության մարմիններին:

10.4. Հարկային մարմին ներկայացված շահութահարկի հաշվարկում սույն հրահանգով սահմանված կարգով հաշվարկված վնասն ավել ցույց տալու դեպքում հարկ վճարողից գանձվում է տուգանք՝ ավել ցույց տված վնասի 20 տոկոսի չափով: Նշված տուգանքը չի կիրառվում այն հարկատուների նկատմամբ, որոնք մինչև հարկային մարմինների ստուգումներն ինքնուրույն հայտնաբերել են իրենց կողմից նախորդ տարիների վնասի ավել հաշվարկում, հաշվապահական հաշվառման մեջ կատարել են համապատասխան գրանցումներ և այդ մասին գրավոր տեղյակ են պահել իրենց հաշվառման վայրի հարկային մարմինն:

Սույն կետով սահմանված տուգանքը կիրառվում է 2001թ. հունվարի 1-ից հետո՝ հարկային մարմին ներկայացված շահութահարկի հաշվարկով ավելի ցույց տրված վնասի նկատմամբ:

Օրինակ 27 Կազմակերպության 2001թ. համախառն եկամուտը կազմել է 30.0 մլն. դրամ, իսկ փաստաթղթերով հիմնավորված ծախսերը՝ 33.8 մլն. դրամ: 2002թ. համախառն եկամուտը կազմել է 20 մլն. դրամ, իսկ փաստաթղթերով հիմնավորված ծախսերը՝ 24.2 մլն. դրամ: Կազմակերպությունը 2003թ. փետրվարի 6-ին իր հաշվառման վայրի հարկային մարմին ներկայացրել է 2002թ. փաստացի շահութահարկի հաշվարկ՝ 8.0 մլն. դրամ հարկային վնասով:

2003.թ. մարտի 6-ին կատարված ստուգման արդյունքով արձանագրվել է, որ 2001թ. 33.8 մլն. դրամ ծախսերից 2.8 մլն. դրամը հիմնավորված են հսկիչ-դրամարկղային մեքենաների կտրոններով և հետևաբար, կազմակերպությունը վնասը ավել է ցույց տվել՝ 1.8 մլն. դրամով:

Ստուգման ակտով կազմակերպությանը առաջադրվում է 0.36 մլն. դրամի չափով (1.8x20%) տուգանք՝ հարկային վնասը ավել ցույց տալու համար:

Օրինակ 28 (օրինակը բերված է առանց հաշվի առնելու տույժերի հաշվարկը). Կազմակերպության 2002թ. համախառն եկամուտը կազմել է 30.0 մլն. դրամ, փաստաթղթերով հիմնավորված ծախսերը՝ 33.8 մլն. դրամ: Կազմակերպությունը 2003թ. փետրվարի 6-ին իր հաշվառման վայրի հարկային մարմին ներկայացրել է 2002թ. փաստացի շահութահարկի հաշվարկ՝ 3.8 մլն. դրամ հարկային վնասով:

2003թ. մարտի 6-ին կատարված ստուգման արդյունքներով արձանագրվել է, որ 33.8 մլն. դրամ ծախսերից 5.8 մլն. դրամը հիմնավորված են հսկիչ-դրամարկղային մեքենաների կտրոններով և, հետևաբար, կազմակերպությունը 2002թ. արդյունքներով՝ հարկվող շահույթը պակաս է ցույց տվել՝ 1.0 մլն. դրամով և հարկային վնասը ավել է ցույց տվել՝ 3.8 մլն. դրամով:

Հաշվի առնելով, որ նախորդ ստուգումը կատարվել է 2001թ., ստուգման ակտում կազմակերպությանը առաջադրվում է 0.05 մլն. դրամի չափով շահութահարկ (1.0x5%), ինչպես նաև 0.1 մլն. դրամի չափով տուգանք՝ վնասը ավել ցույց տալու համար (3.8x20%).

11. Հարկային մարմնի պաշտոնատար անձանց գործողությունների գանգատարկումը հարկատուների կողմից

Հարկային մարմնի պաշտոնատար անձանց գործողությունները հարկատուների կողմից գանգատարկվում են «Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի դրույթներին համապատասխան:

12. Անցումային դրույթներ

12.1. ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում օրենքով կարող են սահմանվել շահութահարկին փոխարինող հաստատագրված վճարներ և (կամ) առևտրի հարկ:

12.2. Արտոնությունների կիրառումը

Մինչև 1999թ.-ի հունվարի 1-ը շահութահարկի գծով օրենքով կամ այլ իրավական ակտերով տրված արտոնություններն ուժի մեջ են մնում մինչև տվյալ օրենքով կամ այլ իրավական ակտերով դրանց համար սահմանված ժամկետի ավարտը:

Ց Ա Ն Կ
գյուղատնտեսական արտադրանքի

- հացահատիկային և հացահատիկատլոռային մշակաբույսերը.
- տեխնիկական մշակաբույսերը.
- պալարապտղային, բանջարային, բոստանային մշակաբույսերը և փակ գրունտի արտադրանքը.
- դաշտային մշակման կերային մշակաբույսերը.
- կերարտադրության այլ արտադրանքը.
- պարտեզների, խաղողի այգիների, բազմամյա տնկիների և ծաղկաբուծության արտադրանքը.
- ծառերի և թփերի սերմերը, պտուղներում եղած սերմերը.
- ծառերի և թփերի սածիլները.
- ծառերի և թփերի տնկիները.
- անասնաբուծության արտադրանքը.
- խոզաբուծության արտադրանքը.
- ոչխարաբուծության և այծաբուծության արտադրանքը.
- թռչնաբուծության արտադրանքը.
- ձիաբուծության, իշաբուծության և ջորեաբուծության արտադրանքը.
- եղջերվաբուծության և ուղտաբուծության արտադրանքը.
- ճագարաբուծության, մորթատու գազանաբուծության և որսորդական տնտեսության արտադրանքը.
- ձկնաբուծություն, մեղվաբուծության, շերամաբուծության, արհեստական սերմնավորման արտադրանքը:

(ուժը կորցրած է ճանաչվել)

**(ուժը կորցրած է ճանաչվել ԼՂՀ ԿԱ ՀՊԾ պետի
20.01.2010թ. N 1/Ն հրամանով)**